

ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Դ. ՏԱՐԻ. 1863. ԹԻԻ Թ.

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Բ

Գ Ի Զ Օ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

Ո Ր

Յ Ե Ի Ր Ո Պ Ի Ա

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ*

Նիւթ ուսման. — Անգլիոյ յեղափոխութեան ընդհանուր կերպարանքը, — Նրա հիւսուոր պատճառները. — Այս յեղափոխութիւնն աւելի քաղաքական է քան թէ կրօնական. — Երեք մեծ կուսակցութիւն այս յեղափոխութեան մէջ իրար են յաջորդում. — Ա. օրինաւոր կուսակցութեան վրայ. — Բ. քաղաքական յեղափոխութեան կուսակցութեան վրայ. — Գ. ընկերական յեղափոխութեան կուսակցութեան վրայ. — Սրանց ամէնքն էլ ձախող են դնում. — Գրոմուէլի վրայ. — Ըստուարտեանց (ցեղին) վերահաստատուելուն վրայ. — Օրինաւոր պաշտօնեայներու վրայ. — Սնտաուկ (սկզբունք և վարմունք չունեցող) պաշտօնեայներու վրայ. — Աղբային պաշտօնեայներու վրայ. — 1669 թնին Անգլիոնն ու Եւրոպիոնն եղած յեղափոխութեան վրայ :

Պարոնայք,

Տեսաք, որ Ժ.Զ. պարու ընթացքունը, Եւրոպական նախնի ընկերութեան ամէն տարերքներն ու իրերը երկու գլխաւոր իրեր լինելու էին զիմել. Ազատ քննողութիւնն ու իշխանութեան կենդրոնաւորութեան

* Տես Կանկան նախընթաց թուերունը.

թիւնը : Մինը կրօնական ընկերութեան մէջն էր դորանում, միւսը քաղաքական ընկերութեան : Մի եւ նոյն ժամանակ եւրոպիումը մարդկային հանձարոյն աղատութիւնն ու բուն միապետականութիւնն էլ էր յաղթահարում :

Անհնարին էր, որ մի օր, մի կռիւ չբացուէր այս երկու իրերու մէջ, վասն զի իրանց մէջ իրարու հակառակ մի բան կար : Մինն էր, բացարձակ իշխանութեան ջնջուելն ու քանդուելը հոգեւոր կարգին մէջ, միւսը, նրա յաղթելն ու դորանալը մարմնաւոր կարգին մէջ, մինը եկեղեցական նախնի միապետութեան կործանումն էր պատրաստում, միւսը աւատային եւ հասարակային նախնի աղատութեանց ջնջումն էր վերջացնում : Այս իրերուն մի եւ նոյն ժամանակումը կատարուելն այն բանով էր իրար հակառակ, ինչպէս ակաւք, որ կրօնական ընկերութեան յեղափոխութիւններն աւելի շուտով էին յառաջ դիմել քաղաքական ընկերութեան յեղափոխութիւններէ, մինն արդէն կէտ հասել էր մարդկային մտածողութեան աղատուելու ժամանակին, մինչդեռ միւսը ապակուին, բոլոր իշխանութեանց մի իշխանութեան միջումը կենդրոնաւորուելու վայրկենումն էր : Այս երկու իրերու միասին հանդիպելն իրար հետ նմանութիւն չունենալուն յառաջ չգալուց յետոյ, բնաւ ամենեւին խափան էլ չէր ընծում միմեանց հետ հակառակ ընկելու : Երկուսն էլ քաղաքակրթութեան ընթացքումը յառաջադիմութիւններ էին, բայց տարբեր հանգամանքներու հետ կապուած յառաջադիմութիւններ, բարոյական ժամանակուայ յառաջադիմութիւններ, թէպէտեւ մի եւ նոյն ժամանակին ընթին իրար հանդիպում : Անհնարին էր, որ այս իրերն իրար հետ միարանուելուց եւ հայտուելուց յառաջ, առանց կպչելու եւ կռուելու իրարու հետ, սրծնէին :

Այս իրերու առաջին անդամ իրարու դէմ հանդիպելն ու իրար խրփելն Անդլիոյում պատահեցաւ : Աղատ քննողութեան կռիւը, որնոր վերանորոգութեան հետեւանքն էր, բուն միապետականութեան հարուածներին տակն ընկած քաղաքական աղատութիւնները ձեռք բերելու համար եւ բացարձակ իշխանութիւնը, ինչպէս մարմնաւոր կարգին մէջ, այնպէս եւ մտաւորական կարգին մէջ կործանուելու փորձն ու ջանքը : Այս է Անդլիոյ յեղափոխութեան նշանակութիւնն ու իր պաշտօնը մեր քաղաքակրթութեան ընթացքումը :

Անդլիական թաղաւորականութիւնը, ցամաքային թաղաւորականութեան նման նոյն եւ մի փոփոխութիւնները կրեց : Թաղաւորականութիւնը Տուրքիան (ցեղին) ժամանակ կենդրոնաւորութեան եւ ազդեցողութեան այն աստիճանին հասաւ, որնոր սակաւին չէր տեսնուել : Այս ասել չէ, որ Տուրքիանց դործնական բռնակալութիւնն աւելի ստատիկ կղած եւ աւելի թանկ նստած ըլնի Անդլիոյ քան թէ իրանց նախորդներուն բռնակալութեան արածները, կարծեմ, Ալլանտանէնէանեանց ժա-

սակցութեան ամէն մասերը միաբանում էին եւ հասարակաց թշնամոյն, դէմ էին դնում, բայց երբ վտանգն անց էր կենում, նորունց ներքին կռիւը սկսում էր եւ ժողովրդային վերանորոգութիւնը նորունց թաղաւորական եւ ազնուապետական վերանորոգութեան վրայ էր յարձակում, նրա անկարգութիւնները յայտնում, նրա բռնակալութենից դանդատում, պահանջում էր, որ իր խոտամուկները բռնէ եւ իր կործանած իշխանութիւնը նորունց յառաջ չբերէ :

Նոյն ժամանակներումը, Անդլիական քաղաքային ընկերութեան մէջ արձակ եւ համարձակ ընկելու մի շարժում եւ քաղաքային ազատութեան մի հարկաւորութիւնն էր յայտնուում, որնոր մինչև այն ժամանակ չէր տեսնուած, կամ թէ անկարող էր : ԺՉ. դարու ընթացքումը Անդլիոյ վաճառակամութեան յաջողութիւնը վերջին արագութեամբ աճեցաւ : Մի եւ նոյն ժամանակ բուն երկրի հարստութիւնը, կալուածական սեպականութիւնը մեծ մասամբ ձեռքից ձեռք փոխուեցաւ : Մի իրողութիւն, մի յառաջադիմութիւն է Պարոնայք, ԺՉ. դարումն Անդլիական երկիրներու բաժան բաժան ընկնելու աւատային ազնուականութեան կործանուելուն ու ուրիշ շատ պատճառներիցը, որոնք այս տեղ մի առ մի յիշելն ու յառաջ բերելը շատ երկար կըլնի : Բոլոր յիշատակարանները մեզ ցոյց են տալի կալուածատէրներու չափազանց կերպով աւելանալը եւ երկիրներուն մեծ մասամբ փոքր ազնուականներու եւ քաղաքացիներու ձեռքն անցկենալը : Բարձր ազնուականները լորդներու խորհրդարանը ԺՅ. դարու սկզբումը հասարակաց խորհրդարանին չափ հարուստ չէր, ուրեմն միանդամայն մեծ զարգացում կար ձեռագործական հարստութեան եւ մեծ փոփոխութիւն կալուածական հարստութեան : Այս երկու իրերու մէջ տեղը մի երրորդ իր էլ էր վրայ հասնում, մարդկանց մտքերու նոր շածողութիւնը : Եղիսաբեթ թագուհու նոյն ժամանակը Անդլիոյ զրականական եւ խնամատիրական ամենամեծ ազդեցութեան արդասաւոր եւ համարձակ մտածմունքների ժամանակն էր : Պարզակրօնները աներկմիտ դէպի յառաջ էին քշում մի սահմանափակ բայց զօրաւոր վարդապետութեան ամէն հետեւանքները : Ուրիշ մարդիկ էլ թէ եւ ոչ այնքան բարոյական, բայց աւելի ազատական, առանց որ եւ է սկզբունքի, անկարգ եւ անկանոն, մեծ փութով իրանց հետաքրքրութեանը բաւականութիւն, իրանց եռանդին սնունդ տուող ամէն դադափարներն ընդունում էին : Ուր տեղ, որ խելքի ու մտքի շարժողութիւնը սաստիկ հաճելի բան է ըլնում մարդկանց, այն տեղ շուտով ազատութիւնը մի ամենահարկաւոր բան կ'դառնայ, եւ ժողովրդեան զլխիցը դուրս գալով տէրութեան մէջ կանցկենայ անմիջապէս :

Յամաքային Եւրոպիումն էլ մի քանի երկիրներումը, ուր վերանորոգութիւնը յայտնուել էր, մի եւ նոյն տեսակ մի հակամտութիւն եւ մի տեսակ քաղաքային ազատութեան հակաւորութիւն էր երեւում, բայց

մարդիկ բռնելը, մասնաւորաց իրաւունքների ոտքի տակ անելը շատ աւելի յաճախ են ըննում եւ շատ անգամ էլ նրանց մասին լռութեամբ է անցկացուում : Սրա վտխարէն, խորհրդարանը, տէրութեան ընդհանուր կառավարութեան մէջ աւելի տեղ է բռնում : Երկրին կրօնը փոխելու համար, յաջորդութեան կարգն ուղղելու համար Հենրիկոս Բ-ին մի նեցուկ եւ հասարակային գործի էր պէտք, այս նեցուկն ու գործին եղաւ իրա համար խորհրդարանը, մանաւանդ Հասարակաց խորհրդարանը : Հասարակաց խորհրդարանը Պլատածէնէտներու ժամանակ ընդդիմադրութեան մի միջոց եւ մասնաւորաց իրաւունքների համար էլ մի երաշխաւորութիւն էր եղել : Տուգորներու ժամանակ կառավարութեան եւ ընդհանուր քաղաքականութեան մի միջոց եւ գործի էլ ըննում, այնպէս, որ Ժ.Պ. դարու վերջին, թէեւ ամէն տեսակ բռնաւորութեան ծառայում եւ ենթարկուում է : սակայն իր կարեւորութիւնը շատ մեծացնում եւ իր իշխանութիւնը հիմնում է : Այն իշխանութիւնն, որու վրայ, հաստատուած է, ճշմարիտն ասելով, երեսփոխանական կառավարութիւնը :

Արդ, երբ Անգլիոյ ազատական օրէնքներու եւ կանոններու վիճակը դիտենք Ժ.Չ. դարու վերջերումը, սրանք կդանենք, Ա. ազատութեան աւաճներ ու սկզբունքներ, որոնք միշտ գրուած են եղել եւ երկնքն ու օրէնագրութիւնն էլ երբէք աչքից չէ կորցրել : Բ. աբղէն հաստատուած օրէնքներ, ազատութեան օրինակներ, իրաւ է խառնիխուռն կերպով եւ իրար հակառակ հին օրէնքներով եւ օրինակներով, բայց բողոքները վաւերացնելու եւ պահպանելու, կամովի կառավարութեան եւ բռնակալութեան դէմ բացուած կռուին եւ ազատութեան պաշտպաններու նեցուկ ընկելու համար բաւական. ազատութեան բողոքներով լիքը, դատաստանական ատեան, ժողովք անկու եւ դէնք առնելու իրաւունք, քաղաքային տեսչութեան եւ վարչութեան անկախութիւն : Գ. վերջապէս, խորհրդաբանն ու իր գորութիւնը, որմէ թաղաւորը շատ աւելի պէտք ունէր, վասն զի իր եկամուտներին մեծ մասը վասնել էր, կալուածք, աւատային իրաւունք, եւ չէր կարող ձեռք վեր առնել, իր առանձին սննուղին համար, երկրին հաւանութեան դիմելուցը :

Ուրեմն Անգլիոյ քաղաքական վիճակը Ժ.Չ. դարումը բոլորովին ուրիշ կերպ էր յամաքային Եւրոպիոյ քաղաքական վիճակից : Չնայելով Տուգորներու բռնակալութեան, չնայելով բուն միապետութեան աբրած կարգաւոր ու կանոնաւոր յաղթանարութեան, այն տեղ ազատութեան նոր հողուոյն համար միամուր նեցուկ եւ գործք տեսնելու եւ ապահով միջոց կար :

Երկու տեսակ աղբային կարիք միտին իրարու վրայ են հասնում, այս միջոցումը Անգլիոյումը : Մին կողմանէ, արդէն սկսուած վերանորոգութեան մէջ կրօնական ազատութեան եւ յեղափոխութեան համար մի

ախը, նոյնպէս եւ մի կրօնական կուսակցութիւնն էլ կար, որ կարգիք ու կրօնականներ ունէր հաստատելու, վարդապետութիւններ եւ կարգադրութիւններ եւ մի եկեղեցական սահմանադրութիւն զօրացնել տալու, այս կուսակցութիւնն էր Երիցականացը 3. թիւն այս կուսակցութիւնը այս բանին համար իր բոլոր ջանքովն աշխատեցաւ, սակայն իր ցանկացածին չափ չէր կարող բոլորովին զուլն դնելու, պաշտպանողական վիճակումն ընկած, եպիսկոպոսներէից էլ նուաճուած եւ մի բան անելու անկարող առանց քաղաքական վերանորոգիչներէ կամքին, որոնք իր զաջակիցներն ու պիտանացու գլխաւորներն էին, ազատութիւնն էր իր գլխաւոր ցանկութիւնը, որնոր ընդհանուր եւ հասարակ էր շարժողութեան մասնակից եղող բոլոր կուսակցութեանց համար, ինչ զանազանութեամբ որ լինէին : Բաներն ամէնը միասին վեր առնելով, Անգլիոյ յեղափոխութիւնը բոլորովին քաղաքական էր, որնոր մի կրօնական ազգի եւ դարձեալ միջումն էր կատարուում, կրօնական մտքերն ու կրքերը իրա ձեռնին գործի էին, բայց իր առաջին դիտարութիւնն ու յայտնի նպատակը քաղաքական էր եւ դէպի ազատութիւն եւ որ եւ է բացարձակ իշխանութիւն կործանելու էր դիմում :

Հիմա, այն յեղափոխութեան այլեւայլ կերպարանքները ցոյց կը տամ. եւ նրա միջումն իրարու քամակից յաջորդող մեծ կուսակցութեանց վրայ կը թափանամ եւ յետոյ Եւրոպական քաղաքակրթութեան ընդհանուր ընթացքին հետ կմիացնեմ, եւ նրա միջումն իր տեղն ու ազդեցութիւնը կնշանակեմ, կտեսնէք եւ զուր, հէնց հայելոյ նման, մանր մուր իրերու տեղեկութիւնից, որ այս յեղափոխութիւնը իսկութեամբ առաջին անգամ իրարու հանդիպելն եւ իրար խփելն եղաւ ազատ քրն-

նակ անյայտ մնալով Երիտարեթ թագուհոյն ժամանակ յայտնուեցաւ եւ ամէնուն մտադրութիւնը դրաւել սկսաւ եւ 1566-թուին Անգլիական եկեղեցիից յայտնաբերւած բաժանուեցաւ : Երիտարեթ թագուհին, Քաթթիլիներից աւելի պարզակրօններու քամակից ընկաւ հալածելու, բայց այս հալածանքն ամենեւին արդէլք չեղաւ նրանց քարանախուն եւ յետագայ թագաւորին օրովը մի կուսակցութիւն ընկելուն Երանց միջից մի մեծ մաս Ամերիկա քաշուեցաւ, որ տեղ Մասսաչուսէտումը բընակեցան, Նիւեո Բրիտոթ եւ Նիւեո Հաւըն եւ ուրիշ քաղաքներ էլ հիմնեցին : Պարզակրօնները նշանաւոր են եղած իրանց հասարակապետութեան համար ունեցած եռանդովը : Ստուարտներու երկրորդ անգամ ընկնելումը ամենամեծ խաղն իրանք խաղացին :

3 Երիցական անունն է տուում Սկոտլանդումը կալլինականներին, վասն զի այս ազանդին մէջ միայն պարզ երեցներ են ընդունուում, որոնք ամէնքն էլ իրարու հետ հաւատար են համարուած, իրանց միջումը ոչ եպիսկոպոս կայ եւ ոչ էլ եկեղեցական մեծաւոր : Երիցականութիւնն է Սկոտլանդումը տիրող կրօնը : Այս աղանդն, որնոր ժԶ, զարուց է սկսած, իրա գրուի ունեցաւ Քնոքս : Երիցականութիւնը մեծ պատճառ եղաւ Մարիամ Ստուարտի քաշած հալածանքներուն Սկոտլանդումը, Սկոտլանդ Անգլիոյ դէմ ունեցած հակակրօնական եւ մանաւանդ այն յեղափոխութեան որ կարողաւ Առաջնոյն զուլն վար դնել :

քաղաքական իշխանութիւն ունէին եւ թէ իրանց դատելու համար ունեցած իրաւունքը շատ ու շատ ընդարձակ էր եւ թէ պէտք էր կարճացնել եւ նրանց իշխանութիւն վարելուն վրայ հսկել : Սակայն սաստիկ կերպով եպիսկոպոսականութեան կողմն էր բռնում, ոչ թէ միայն իրրեւ եկեղեցական սահմանադրութիւն, իբրեւ եկեղեցոյ կառավարութեան դրութիւն, այլ իրրեւ պիտանայցու նեղով թագաւորական աւաւելապատուութեան, իրրեւ միջոց կրօնական առարկայումը թագաւորին գլխաւորութիւնը պահպանելու եւ պաշտպանելու : Թագաւորին վերին իշխանութիւնը քաղաքական կարգին մէջ արդէն ծանօթ եղած օրինաւոր ձեւերունն ու սահմաններումը դորձադրելի : Թագաւորին գըլխաւորութիւնը կրօնական կարգին մէջ եպիսկոպոսներու ձեռքով դորձադրելի եւ պահպանելի : Այս էր օրինաւոր կուսակցութեան կրկնակի դրութիւնը (կարգ ու կանոնը), որոյ գլխաւոր պարագլուխներն էին, Քլարէնդոն, Ֆոլէպէպըր, Լորդ Քարելլ եւ Լորդ Ֆալքլանդ ինքն, որ թէ ջերմ բարեկամ էր հասարակաց ազատութեանցը, եւ թէ իր կողմանէ էին գրեթէ բոլոր այն մեծամեծ պարոններն, որոնք ծառայաբար անձնանուէր չէին թագաւորին :

Սրանց քամակից յառաջ էր դալի մի երկրորդ կուսակցութիւն, որուն քաղաքական յեղափոխութեան կուսակցութիւն կանուանեմ, այս կուսակցութիւնն էլ կարծում էր, որ հին երաշխաւորութիւնները եւ հին օրինաւոր պատուարներն անբաւական եղած էին եւ են, եւ թէ մի մեծ փոփոխութիւն եւ մի ճշմարիտ յեղափոխութիւն պէտք էր անել, ոչ թէ ձեւերու մէջ, այլ բուն իսկ կառավարութեան մէջ եւ թէ պէտք էր թագաւորից եւ իրա խորհրդից իրանց իշխանութեան անկախութիւնն առնել եւ հասարակաց խորհրդարանումը դնել, կամ թէ, քաղաքական առաւելապատուութիւնը եւ բուն կառավարութիւնն այն խորհրդարանին եւ նրա գլխաւորներին պէտք էր, որ պատկանէին : Այս կուսակցութիւնն իրա միտքերն ու դիտմունքներն ինչպէս, որ էս այս տեղ պարզապէս յառաջ եմ բերում, այնպէս չէր յայտնում, բայց սրանք էին իրա բուն վարդապետութիւններն ու քաղաքական դիտաւորութիւնները թագաւորին միանեման դերիշխանութեան եւ բուն միապետութեան տեղ կամենում էր Հասարակաց Խորհրդարանին բարձրագոյն իշխանութիւնը իրրեւ ներկայացուցիչ ամբողջ երկրին : Այս մտքին տակով թագաւորած էր եւ ժողովրդեան կամ ազգին զերիշխանութեան գաղափարը, որու կուսակիցները շատ հեռու էին նրա ծանրութիւնը կշռելուց եւ նրա ամէն հետեւանքները կամենալուց, բայց այս գաղափարն էր նրանց առջեւ երևողն եւ իրանք էլ ընդունում էին նրան Հասարակաց Խորհրդարանի գերագոյն իշխանութեան ձեւովը :

Մի կրօնական կուսակցութիւն, այն է երկրականացը, պինդ կերպով միացած էր քաղաքական յեղափոխութեան կուսակցութեան հետ : Ե-

պաշանջում, կամենում էր մի խօսքով, վերանորոգել ոչ թէ միայն հասարակային իշխանութիւնը, այլ ընկերական յարաբերութիւններն ու մասնաւորաց իրաւունքները :

Յառաջուայ կուսակցութեան պէտք, սա էլ մի մասամբ կրօնականով եւ մի մասամբ էլ քաղաքականով էր կազմուում, քաղաքական մասումը բուն հասարակապետականներն էին, Ղուզլով, Հարրինկածն, Միլտոնն եւ այլն, եւ ուրիշ հասարակապետութեան վարդապետներ : Սրանց չարքունն էին ըստ հանդամանքի ու շահու համար երոզ հասարակապետականները եւ բանակին ղլխաւորները : Այրդոն, Գրոմուէլ, Նամբերգ որոնք սկզբումը քիչ կամ չատ ջերմ եռանդով էին բայց մի փոքր յետոյ սկսան իրանց անձնական դիաւաւորութենից եւ իրանց վիճակի դժբութենից առաջնորդուիլ եւ տիրապետուիլ : Սրանց չորս կողմովն էին բռնած կրօնական հասարակապետութեան կուսակցութիւնը եւ բոլոր մոլի աղանդներն, որոնք ուրիշ օրինաւոր իշխանութիւնն չէին ճանաչում բացի Յիսուսի Քրիստոսի իշխանութենից, նրա դաւաւտանն էին սպասում եւ նրա ընտրածներուն կառավարութիւնն էին կամենում : Այս կուսակցութեան քամակից, վերջապէս, մի շատ ստորին կարգի աղատամոյներ, սրիկայներ եւ մուկոանդ երազատեսներ էին դալիս, որոնք, ոմանց անառակութիւն անել, ոմանց ստածուածքի հաւասարութիւն, կամ ընդհանրական քուէարկութիւն էին խոստանում :

1653-ին, Պարոնայք, տասներկու տարուայ կռուից յետոյ, բոլոր այս կուսակցութիւնները հետդհեւէ երեսել եւ չյաջողելով ընկել էին, կամ թէ պէտք էին իրանք կարծել, որ չէին յաջողուել, վասն զի ժողովուրդն այնպէս էր համոզուել : Օրինաւոր կուսակցութիւնը չուտող անցկենալով, հին սահմանադրութեան, հին օրէնքներուն արհամարուած եւ ոտքի տակ առնուած լինելը եւ նորածեւութեանց ամէն կողմից ներս մտնելը տեսել էր : Քաղաքական յեղափոխութեան կուսակցութիւնը, տեսնում էր խորհրդարանական ձեւերուն իրարած նոր սովորութեանց մէջ կորչելը : Տասներկու տարուայ տիրապետութենից յետոյ, տեսնում էր, որ Հասարակաց խորհրդարանն իրա միջից հետդհեւէ թազաւորականաց եւ երկցականաց դուրս հանուելովը շատ քիչ անդամներով էր մնացել, որոնք ատելի եւ զղուելի էին ժողովրդեան եւ անկարող կառավարելու : հասարակապետութեան կուսակցութիւնը երեսում է, որ աւելի լաւ յաջողած ըլնի եւ յարտաքուստ էլ իշխանութեան տէր եղած : Հասարակաց խորհրդարանում հարիւրից ատելի անդամ չկար, որոնց ամէնքն էլ հասարակապետական էին եւ կարող չէին իրանք իրանց երկրին տէրը կարծել, բայց երկիրը նրանցից կառավարուիլը բոլորովն մերժում էր, ոչ մի տեղ սրանք, իրանց կամքը չէին կարողանում քշել տալ, ոչինչ իշխողութիւն չունէին ոչ բանակին եւ ոչ աղջին վրայ : ոչ միութիւն եւ ոչ սպանօվութիւն էր մնացել, արդարութիւն չէր ըլ-

Երկար խորհրդարանի առաջին տարիներումը ոչինչ ձայն չունեցաւ, սակայն հետզհետէ Գանտօնը եւ Բոնաբարոն եղաւ եւ ամէնից աւելի ձեռնտու եղողն իշխանութիւնը կործանելու, թէեւ յետոյ ինքն եղաւ նրան կանգնեցնողը, նրա համար, որ բացի իրանից ոչ ոք կարող չեղաւ ձեռն առնել եւ բանեցնել : Հարկաւոր էր անշուշտ, որ մէկը կառավարէր, ամէնքն էլ այս բանումը անյաջող եղան, նա միայն յաջողեցաւ, այս էր իր պաշտօնը : Մի անգամ, որ տէր դառաւ կառավարութեան, այս մարդը սրուն փառասիրութիւնն այնքան յանդուգն եւ անառնան էր երեւել, որ միշտ ղէպի յառաջ էր դիմել քչելով բաղդին իրա առաջը եւ որոշել էր երբէք կանգ չառնել, առողջ խելք ունեցաւ, խնաստութիւն սրաւ եւ կարիւրութիւնը կշռեց, որոնք իր ամենաբուռն կրից վրայ կշռուէին : Անչափ սէր ունէր բացարձակ իշխանութեան վրայ եւ մի մոլեգին փափաք թագն իր տանը գլխին դնելու, բայց հետ կացաւ այդ զիտաւորութենից, որուն վտանգները ժամանակին ճանաչեց, իսկ բացարձակ իշխանութիւն թէեւ իրօք վարեց, բայց լաւ համակցել էր, որ իր ժամանակին հոգին բացարձակ իշխել չուզէն է, եւ թէ իրա մասնակից

քունն իր երիտասարդութեան կրից կրակին հետ եւ հասուն հասակի խորունկ տեղեկութիւններ ունենալը ցոյց տուաւ, շուտով ամէն ատենարաններից վերին դասուեցաւ եւ ամենուն համարը խաւարեցրեց եւ այն կեդրոնն եղաւ, որուն շրջա կողմը հաւաքուեցան երկրորդ կարգի ժողովրդեան ընտրած բոլոր երեւելիներն ու զօրաւորները : Մի շատ ճառեր ունի ասած, որոնք իրան Յրանսիոյ Թէմոստենէսի տեղը դնել տուին, այս ճառերու մէջ իր մի խօսքը երեւելի է, երբ թաղաւորին ուղղեց ձեռքայի զօրքերը յետ դրիւլու համար եւ այն եւ այն : Միրապօ իրան ամենայնադուգն վերանորոգիչ ցոյց տալու յետոյ, թաղաւորականութեան մտուեցաւ, այս բանիս համար արքունեաց սակովը շահուեցաւ արացին իրան, բայց հաւանալան է որ համոզմամբ արած ընի : Այս իր վարմունքն իրան շատ թշնամիներ յարուց եւ արդէն իր ժողովրդականութիւնը սկսում էր տատանել, երբոր յանկարծակի մեռաւ 1791-թուին, իր մարմինը մեծ փառասիրութեամբ Բանթոն (ամենադից մեհեան) տարուեցաւ, բայց երկու տարի յետոյ խաժամուժ ամբօրը նրա դիակը գերեզմանից հանեց եւ քամուն տուաւ : Միրապօ շատ տեսակ զրուածքներ ունի, առաջիններն իր երիտասարդութեան զիժովիւնները, որոնք անառակ զրուածքներ են, միւսները ըստ պարագային զրուածներ, բայց իր զլխատը գործքէն են իր ճառերը, սնանկութեան վրայ, եկեղեցականաց քաղաքային սահմանադրութեան վրայ, թաղաւորին նուիրականութեան վրայ, բաղադրութեան վրայ եւ պատերազմի իրաւանց վրայ, իր պատասխանը Մորի Աբրայային եկեղեցական ստացուածքներու մասին :

1 Գանտօն (Գէորդ Յակօբ) երեւելի Ռամկավարը ծնած է 1759-թուին Յըրանսիոյ Արսիս-Սիւր-Օր աստուած տեղումը, թաղաւորին խորհրդումը փաստաբանութեան պաշտօնն էր վարում, երբ Յրանսիական յեղափոխութիւնը լոյս ընկաւ սա մեծ եռանդով յեղ սփոթական սկզբունքներին յարեցաւ եւ թաղաւորականութենից բաժանուեցաւ, բնութենից ամէն տեսակ յատկութիւններն ունէր ժողովրդեան վրայ հրամանատար կամ Ռամկավար ընելու, չափից դուրս ազդեցողութիւն, բեղմնատը եւ ընդարձակ խելք, մի չափազանց վառվառն երեւակայութիւն, մի վիթխարի հասակ, մի ստակալի երևոյթով կերպարանք եւ մի որո՞տաձայն խօսել :

կրօն կամ թագաւորական, հասարակապետական կամ պաշտօնակալ, ոչ ոք բացի Գրումուէլից չէր կարող այնքան ժամանակ մի փոքր կարգով կանոնով եւ արդարութեամբ կառավարել, այս բանիս փորձն եղել էր, անկարելիութիւն կար խորհրդարանին թողել, այսինքն խորհրդարանումը նիստ անող կուսակցութեանց, որ իշխողութիւնն էրանց ձեռքն առնեն, որնոր չէին կարող վարել եւ գործածել: Այս էր Գրումուէլի զբրութիւնը, մի այնպիսի դրութեամբ էր կառավարում, որնոր քաջ զիտէր ազգին ուղածը չըլնելը, հաւանելի եւ հարկաւոր մի իշխանութիւն էր վարում, բայց ոչ ոք չէր ընդունում այն, ոչ մի կուսակցութիւն նրա տիրապետութիւնն իբրեւ սահմանուած կառավարութիւն համարեց, Թագաւորականք, երկրականք, հասարակապետականք բանակն անգամ, որ Գրումուէլի անձնանուէր կուսակցութիւնն էր երեւում. համոզուած էին, որ այս տէրն անցաւոր է: Եւ ըստ ինքեան Գրումուէլ երբէք մտքերու վըրայ չտիրեց, հէնց միայն չարին չարն ու ժամանակին պահանջածն էր եղել: Անդլիոյ բացարձակ տէրը եւ պաշտպանը բոլոր իր կեանքումը պարտաւոր էր եղել քաջութեան գործքեր անելով իշխանութիւնը ձեռքն պահել, ոչ մի կուսակցութիւն նրա պէս չէր կարող կառավարել, բայց ոչ մինն էլ չէր ուղում նրան, շարունակ նրանց բոլորն էլ միանգամայն իրան թշնամի ունեցաւ:

Գրումուէլի մեռնելոց յետոյ, հասարակապետականք միայն կարող էին իշխանութեան վրայ ձեռք դնել, արին այս բանը, բայց յառաջուայ պէս էլի չյաջողեցան. այս անյաջողութիւնը Վտահութեան պակասութեանց չէր դէթ մոլեռանող կուսակցութեանց մէջ: Այս ժամանակներումը Միլտոնի հրատարակած մի թերթը կայ, որնոր եռանդուն քանքարով լիքն է, այս անունն ունի, «Մի հեշտ եւ արագ միջոց հասարակապետութիւն հաստատելու»: Տեսնում էք այս մարդկանց կուրութեան որ աստիճանի ընկելը, շուտով նոյն կառավարելու անկարելիութեան մէջ ընկան, որուն մէջ արդէն ընկել էին: Մոնք այն դէպքին առաջնորդն եղաւ, որուն Անդլիան սպասում էր, թագաւորական (ցեղին) վերահաստատութիւնը կառարուեցաւ:

Ստուարտեանց ցեղին վերահաստատութիւնն Անդլիոմ մի ազգային ղէպք եղաւ: Այս վերահաստատութիւնը միանգամայն մի նախնական կառավարութեան արժանաւորութիւններովը երեւեցաւ, մի կառավարութեան, որ երկրին աւանդութեանց եւ յիշատակներին վրայ էր հաստատուած եւ մի նոր կառավարութեան առաւելապատուութիւններովը, որուն տակալն փորձը չէին արել եւ թերութեանցն ու ծանրութեանը չէին ենթարկուած: Հին միապետութիւնը միայն կառավարութեան այն դրութիւնն էր, որ քսան տարուց հետէ իրա անյաջողութեամբն ու անկարողութեամբը վատ համբաւ չէր հանել: Այս երկու պատճառներն եղան վերահաստատութեան ժողովրդային ընկնուոն: Իրա ղէմ միայն

Այն ժամանակ կառավարութեան մի նոր դրութիւն զուրս եկաւ, այն է թագաւորական կուսակցութեան մի մասն, որոյ վրայ խօսեցայ Ալատամուղք վատամարդիկ պաշտօնէից խումբը կազմեցին, որոնց «Փաբալեան»¹ պաշտօնեայք անուանեցին: Տեսէք ինչպէս էր սրանց հողին: Սրանք բոլորովին անհող եւ անփոյթ էին սկզբունքների, օրէնքների եւ իրաւունքների մասին, ոչինչ հող չունէին արդարութեան եւ ճշմարտութեան համար, այլ միայն ամէն առիթումը յաջողուելու միջոցներն էին վնասուում, թէ որ յաջողութիւնը Հասարակաց Խորհրդարանի աղղեցութենից էր կախուած, նրա կարծիքն էին գրկում եւ ըստ նրա էին խօսում, թէ որ պէտք էր խտրացնել Հասարակաց Խորհրդարանը, խաղացնում էին, բայց միւս օրը էլի ներում էին խնդրում նրանից: Մի օր կաշառելով եւ անպահանջով գործք էին տեսնում, միւս օրն աղղային հողին էին շողոքորթում, ոչինչ հող եւ ինամք չկար երկրին ընդհանուր օգտին, արժանաւորութեան եւ պատուոյն համար, մի խօսքով մի բոլորովին անձնախնդիր, անձնապաշտ եւ անխիղճ կառավարութիւն, որ եւ է վարդապետութենից եւ հասարակային խորհրդից օտարացած, բայց ըստ ինքեան գործք կատարելումը բաւականին խելօք եւ բաւականին էլ աղատական: Այս է Փաբալեան, կոմս Գանբիի պաշտօնէութեան եւ 1667-ից մինչեւ 1669 թիւը Անգլիական կառավարութեան հողին: Չընայելով այս կառավարութեան անբարոյականութեանը, չնայելով իր ունեցած արհամարհանքին երկրին ճմարիտ սկզբունքներին եւ չահելին վրայ, այս կառավարութիւնն այնքան ատելի չեղաւ ժողովրդեան, որ քան որ Քլարէնդոնի պաշտօնէութիւնն եղել էր, ինչո՞ւ համար, նրա համար, որ իր ժամանակին աւելի յարմար էր եւ աւելի լաւ էր հասկանում ժողովրդեան զգացմունքները, նրանք քանի տեղ չդնելով անգամ, Հնայած եւ օտարացած չէր Քլարէնդոնի պաշտօնէութեան նման,

1 Փաբալեան պաշտօնեայքը նրանք էին, որոնցմով, որ Կարոլոս Գ. իր առանձին խորհրդեան ատեանն էր կազմել, որնոր չորս տարի 1666-ից մինչեւ 1670 ամենացաւախ մի աղղեցութիւն վարեց Անգլիոյ գործքերի վրայ: Փաբալեան անուանեցին սրանց, վասն զի հինգ հողիով էին կազմուած, որոնց անուանց սկզբնատառերը Անգլիական «Փաբալ» բառն էին շինում: Սրանք էին այն անձինքը Քլիֆօրդ, Աշէյ, Բիլգէնկամ, Ալլէնդոն, Լոդէրաւ: Փաբալն է, Հրէից մի գաղտնի վարդապետութիւնը, որով ուսուցանում էին մի խորհրդաւոր աստուածգիտութիւն, որու հիմ էին դնում Աստուածային բլլիման վարդապետութիւնը եւ սուրբ Գրոց այլաբանական մեկնութիւնը եւ մի սլոյնակի դիցահմայութիւն, որով կարծում էին հնազանդեցնել մարդկային կամքին տակ գերբնական զօրութիւնը մի քանի խօսքեր արտաբերելով եւ նրանցմով ամէն տեսակ հրաշքներ գործել, այս կրօնն որուն սկիզբն, ասում են, Հրէից Բաբելոն գերութեան գնալուցը ընի, գտնուում է լիաւորապէս Եղիբայի մէջ որուն հնդինալութիւնը տալին են Անդիբա Բաբելին, եւ Զօհարը նրա Բէն-Եօբայ աշակերտին: Փաբալ եւ գաղտնի միաբանութիւն կամ դաւաճանութիւն եւ խումբ դաւաճանների կը ընշանակէ:

դիր է գալի եւ միանում բացարձակ իշխանութեան խնդրոյն հետ, կրօնական խնդիրը : Յակոբ Բ. կամենում է պապականութիւնն էլ բռնակալութեան հետ միասին յառաջ քշել : Ահա ձեզ յեղափոխութեան սկզբանը նման մի կրօնական կռիւ եւ մի քաղաքական կռիւ բաց են ըլնում կառավարութեան դէմ : Շատ հարձուփորձ եղաւ թէ, ինչ պատահում կը ընէր, եթէ Կուլլիէլմոս Գ. չընէր եւ թէ իր Հոլլանտացոց հետ գալիս չընէր վերջ տալու Յակոբ Բ-ին եւ Անգլիական ազդին մէջ բացուած կռուին : Հաստատ կարծում եմ, որ նոյն եւ մի դէպքը կատարուում կը ընէր : Բոլոր Անգլիան բացի մի փոքրիկ կուսակցութիւնից միտքանել էր այս ժամանակ ընդդէմ Յակոբի, եւ անշուշտ, որ եւ է կերպով, 1688-թուին յեղափոխութիւնն անում կը ընէր : Բայց այս ճրգնաժամին Անգլիոյ ներքին վիճակի պատճառներից ուրիշ շատ մեծ պատճառներու համար վրայ հասաւ Այս ճգնաժամն, ինչպէս Անգլիոյն նոյնպէս եւ Եւրոպիոյն էլ կարւ Այս տեղից եւ այս բանով է, որ Անգլիական յեղափոխութիւնը միանում եւ կապուում է նոյն իսկ այս իրերով : Քան թէ իր օրինակին վարել կարող եղած ազդեցութեամբ Եւրոպական քաղաքակրթութեան ընդհանուր ընթացքին հետ :

Երբ Անգլիոյն, այս, ձեզ սչատմած կռիւը սկսաւ, բացարձակ իշխանութեան կռիւն ընդդէմ կրօնական ազատութեան եւ քաղաքային ազատութեան : Նոյն եւ նման մի կռիւ էլ ցամաքային Եւրոպիոյն էր բացուում. թէ եւ շատ տարբեր մարդիկներով, ձեւերով եւ տեղերով, բայց բանը նոյնն էր եւ նոյն պատճառով էր : Ժ.Գ. Լուդովիկոսի բռն միապետութիւնը ջանք էր անում արեւելեան միապետութիւն ընելու, գէթ տեղի էր տալի վախենալու, որ կը ընէ : Իրօք Եւրոպիան վախենում էր : Եւրոպիոյ մի դաշնակցութիւն եղաւ, սյրեւայլ քաղաքական կուսակցութեանց մէջ, այս ջանքին եւ փորձին դէմը դնելու համար : Այս դաշնակցութեան զլուխն եղաւ, ցամաքային Եւրոպիոյն, կրօնական ազատութեան եւ քաղաքային ազատութեան կուսակցութեան զըլուխը, Օրանժեան իշխան Կուլլիէլմոսը : Հոլլանտաց բողոքական հասարակապետութիւնն իրա զլուխն ունենալով Կուլլիէլմոսը, սկսաւ դէմ կենալ բացարձակ միապետութեան, որուն ներկայացնողն ու առաջնորդողն էր Լուդովիկոս Ժ.Գ. : Բանը տէրութեանց ներքին կրօնական եւ քաղաքական ազատութեանց վրայ չէր, հապա իրանց արտաքին անկախութեան վրայ : Լուդովիկոս Ժ.Գ. եւ իր հակառակորդներն ամենեւին չէին կարծում, որ այն խնդրոյն համար են կռուում իրանք, որու համար Անգլիոյն կռիւ եղաւ : Կռիւը ոչ թէ կուսակցութեանց մէջն էր անցկենում, այլ տէրութեանց մէջ : Պատերազմով եւ քաղաքականութեամբ (դիպլոմատիով) էր ընում կռիւը եւ ոչ թէ քաղաքային եւ յեղափոխական շարժողութիւններով : Բայց խորը նայելով բանը մի եւ նոյն խնդրին վրայ էր :

Ա Ղ Բ Ի Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԿԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մեր ուսումնասիրաց մեծ մասին յայտնի պէտք է լինի Յ. Պ. Գ. Շիրմազանեանցի երեսուն տարիէ ի վեր ժողոված Հայոց գրչագիրները եւ մանաւանդ մեր պատմութեան վերաբերեալ շատ կոնգալները, ազգային մահաներէէրը, եպիսկոպոսաց, վարդապետաց եւ երեւելի երեւելի անձանց ողջունագիրներն, եւ եւս վերջին դարուն քանի մի պատմութիւնները, որոնք անհայտ են գրագիտաց :

Քանի մի օր յառաջ նրա գրատանումը խօսակցութեան շարն հասաւ պապականութեան կոտանդնուպոլսոյ Հայոց մէջն Էրբ եւ Խնչ եղանակով մտնելն եւ թէ որոնք են հղած պատճառները : Որոնք շատ վեր ի վայր եւ անատոյգ են, կամ երբէք չեն յիշուած Չամկեան Հայր Միքայելի պատմութեան մէջը :

Յ. Գ. Շիրմազանեանցը ցոյց տուաւ ինձ մի խկա-կան բաղմակնիք մահաներ, զրած 1706 թուին եւ Հայոց ՌՃԾԵ որնոր անաւ տպում ենք, հաստտի ենք, որ սրանով մեր ազգային պատմութիւնը պապականութեան ազդի մէջը մտնելոյ մասին, մի նոր լուսաւորութիւն կատանայ սյապիսի տոտոյգ ազդիւրից առած, Քանի մի խօսք այս մահաների մասին անելը կարծեմ աւելի չըլնիր : Մահաներ է երկու էջով զրած պիրզ ու հաստ թղթի վրայ :

Գիրն է անցեալ դարու շրջիւրը, այսինքն եղէցի գրչով զրած հաստ եւ պիրզ եւ ընտիր ու դիւրին վերձանելի : Ժամանակը մահաների վերտառութիւնը կամ գլխի քանի մի չարքը մաշած է, վասն որոյ եւ որպէս մահաների գլուխը, նոյնպէս եւ երկրորդ էջի գլուխն էլ պակաս են, նրա համար էլ մենք այն տեղրանքը կէտադրութեամբ ենք տպում : Մահաների աջակողմի լուսանցն լայն թողած է եւ կարմրադեղով բաժանուած է ստորագրողաց կնիքներէր համար, եւ մեք եւս այս կնիքնէրի որի տակին որ անուն կար, անունը տպեցինք, իսկ ինչ կնքի տակին որ անուն չկար, այնպիսի կնիքնէրն հաշուեցինք առանց ստորագրութեան կնիքնէրի թուումը : Առեւն հարկաւոր է, որ էն ժամանակուան կնիքնէրը կամ տառերն կամ կերպն ինչ ձեւով են գործածվում լինում արժանի են հնազոտաց հետաքրքրութեանը . իսկ նկսթի կամ ոճի վրայ աւելորդ եմ համարում խօսելն, որովհետեւ կարդացողն ինքը կզնահատէ :

ուեսաւորոք արամբ մեծամեծօք մինչ ի փոքունս խոնարհեալ իրր ծառայական գոլ ի հեռաստանէ, և ի խորոց սրտէ՝ նախ յերկրդազութ իւն սուրբ Իջման տեղի միածնի որդւոյն Աստուծոյ: Երկրորդ երեսանկեալ ստորոյ գահոյնց քօ սուրբ յաթռոյն՝ Թաթէոսի, Բարդուղիմէոսի՝ և Գրիգորի Առաքելոցն Քրիստոսի: Անձրեաժ ին և արտասոււահեղ աչօք, բերկրեցեալ սրտիւ՝ համբուրեմք թանալով երկնագնաց յոտդ և բազկատարած բազուկք քօ: Եւ կրինապատիկ օծեցեալ յաջ սրբազանիդ՝ մկրտիչ անմահ դառին Աստուծոյ մարմնոյ և արեան հպեցեալ քահանայապետ: Եւ ասեմք օրհնեալես դու ի վերայ մեր, և օրհնեալ ես յամենակարողէն Յիսուսէ Քրիստոսէ՝ որոյ կամակեցու թեամբն հրաւիրեցար հանդչել ի գահնց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Եւ ամենեքեանս ասեմք՝ Արժանէ, կեցցէ՛ իբրև արքայօրէն՝ զչայբապետն մեր՝ անփորձ և անսասան յումեքէ, իբրև զվէժ անդրդուելի: Եւ եղևցիս սիւն հաւատոյ տանս՝ Հայաստանեաց: Ձի շնորհաւոր և փառաւորութիս ժառանգեցես կարողութեամբն յԱստուծոյ աթռն Լուսաւորչի, և ի պարծանս հայկազուն Արամեան յազգիս՝ հանդերձ հանդիսացեալ յաթռոյ յաջ և ահեակ հիւսելոց խրմբից՝ արհի եպիսկոպոսացդ և զաստուծաբան վարդապետացդ և կուսակրօն քահանայիցդ և եկեղեցական զասուց կարգաւորութեանցդ: Վեհափառ պարոնացդ և խոճամէլիք զատէ իշխանացդ՝ որք են հաւատարիմ տանն յԱստուծոյ որոց մատուցուք ողջոյն: Յիսուսաւանդ համբուրիւ, զի ողջ լեցին դահու թեամբ ի պարծանս յամենայն Հայոց Տեառն մերոյ սրբազան Ազէքսանդր կաթուղիկոսին խնդալ նովմբ ի Տեր ամէն:

Չայս գիտութիւն լեցի հոգևոր հօրդ մերում. զի խոնարհեցուցես յունկն քօ լուիցես արզուհալս մեր՝ վեժ ի մաղթանօք, զոր խնդրէ մանկունք քօ և զինչ արարից այսքան երկարութեան իրայն եղևոց եկելոց՝ զոր գործեցին նոր իմ արխանուքն, զի թէ զրեցից զամենայն, երկնչիմք ի լսելացդ մի՛ լեցի ձանձրութիւն, եթէ ոչ զրեցից զվերսն ս՝ ծանուցէ բժշկապետի վեհանձնութեան քում: Ձի բազում անդամ ծառայօք նախագո եղբօր քում, և նա անհոգ լեալ կենցաղա-

սահմանս Հայոց զգլիկ գլով ի տանէ ի տուն՝ խրատել զնոսս
 դիւրութեամբ, հեշտացոյցք ճանապարհաւ : Զխոստովանու-
 թիւնս եթէ իցէ արուակն և իգակն պէսպէս տիղմն ապա-
 կանութեան՝ զայդ ամենայն ասէ՝ ընդդէմէ բնութեան մարմ-
 նոյ, և ոչ ընդդէմ հոգւոյ : Որ է նախանձ հպարտութիւն՝ և
 հայհոյութիւն, և այլն : Եւ եթէ իցէ որ ընդդէմ բնութեան
 մարմնոյ մեղիցէ, կրեսցէ յապաշաւանս այս՝ Ե. անգամ ող-
 ջոյնն ասիցէ դէպ յարեւել ընդդէմ պատկերի կուսին Մարի-
 ամու՝ խոնարհելով ի ծունկս, և նովինը ներումն լիցի : Եւ
 այսպիսի հեշտացոյցք աղանդիւ պատրեցին բազումս ակամա-
 բաց : Նախ հեշտասէր և փափկասէր չար իշխանք Հայոց զի
 լիցի իւրեանց թիկնապահ, և եղև այնպէս : Եւ եթէ քա-
 հանայից՝ իշխանաց, և կամ ռամկաց՝ դպրաց արանց և կա-
 նանց կուսից՝ մոլորեալ ճողոպրեցան յազգս յազգէս, և ե-
 գին հատեալք ի մէջ թշնամի՝ և հակառակ միմեանց, խընդ-
 բելով զարիւնս իրերաց հեղցուցանել յերկիր խեռ և նախանձ,
 աղմուկք և խռովութիւն աննուաղ, մատնելով զմիմեանս ի
 բանդի և ի տուգանաց : Եւ ի միում տանն յարիցէ որդին ի
 վերայ ցհայրն և ասիցէ, ո՞վ մոլորեալ և գտէտ՝ ընդէր այգքան
 կուրացեալ մնալով մեռանիս հաւատով Հայոց, որ զնալոց ես
 ի վիհս ներքին դժոխս՝ տեսանես ուստի ծնանին ասելու-
 թիւնք՝ և անհնարին խաղաղութիւն, և սոքա քարոզով ոչ
 զղջանան, բայց ողորմութեամբն Աստուծոյ՝ ակն ունիմք զբոյն
 հրամանն անիծից՝ արագահաս ժամանեցի ի վերայ այնոցիկ
 որք ուրացան զուրբ հաւատս մեր, և հակառակին ճշմարիտ
 լուսաւորչադիր յորինացս, որով խրատեալ ծանիցեն զճշմա-
 րիտն, զի դեր ևս ոչ ծանեան : Եւ յամենայն ազգ և ազինք
 ի գովաբանութիւնս արարկէին զպարկիշտութիւնս ուսանիլ
 միայն ի Հայոց : Եւ այժմ ամաչեցեալք, և տեղացեալ ի վե-
 րայ մեր ծանաք, ծաղրաբանք ծիծաղական, շրէից և այլա-
 սեռից՝ վասն դարձուածոց և աղթարմա ուրացող, հայհոյիչ
 անարդիչ, անհնազանդ սահմանաց և կանոնաց լուսաւորչադիր
 յորինացս, և Քրիստոսադաւան հաւատոց հանապազ հակառակ
 և անարդիչ հոգւոյն Աստուծոյ, որ հրաման է իւրոյ՝ ի կա-
 պանս անթողել : Բերկորդ ուրացեալքն ոչ ընդունին զքա-

ի գիր արկանել : Եւ այս ժէ՛ ամէ՛ յազգիս աւերածութիւնն նախ զպատճառն ասեմք՝ զԿումիշխանեցի Խաչուրաց արեղայն որ քոյէ՛ Յովսէփ վարդապետն վասն ոսկոյ ազահութեանն ետուր նմա գաւազան վարդապետական՝ եմոյժ զեկեղեցիս Հայոց և սկսաւ դարձուցանել նախ ոսկերիչ տեղացի զլիաւոր հեշտասէր իշխանացն՝ զի թիկունք լիցին իւրն : Եւ բերեալ զնա Գաղմատացոց ժամէն՝ առ եկեղեցիս Հայոց՝ քարոզեցէ՛ և որքան վարդապետաց մերոց գային քարոզել՝ և այն չար իշխանքն ի բաց հանեալ վարանէին ձեռամբ ժամակոչացն՝ եթէ՛ մեզ բաւական է Աստուածաբան Խաչատուր վարդապետն Եւ լուեալ ժողովրդեանն զնոսա, որ հակառակ լիալ յօրինաց Լուսաւորչին մերոյ՝ Ամբոխ կուտեցան յարեան ի վերայ նորա ի մէջ եկեղեցւոյն՝ զի սպանցեն, և նա փախեալ եմուտ առ Յռանկս : Եւ ժողովեցաք ամբոխիւ՝ արզ արարաք թաղաւորին. և հրաման ել ժողովեցին զաթարմայքն և արարին բբրածեծ՝ և եղին ի քիւրէկն ի պատրիարկութեան Նփրեմ վարդապետին : Յետ այնորիկ եղև Մխիթար վարդապետն պատրիարգ՝ և միաբանեալ աթարմայից կրկին ևս յարուցան Աթարմայքն և տիրեցին զեկեղեցիս, և եղև առաջնորդ Մինաս վարդապետն յԵրուսաղէմայ և կրկին անգամ ժողովուրդն արզ արարին թաղաւորին, և ընկեցին զՄխիթարն և եղին զտեղի Մլքսեթ վարդապետն և արարին հալածանս Աթարմայիցն և Մլքսեթ պատրիարգն միաբանեալ ընդ նոսա : Բերեալ զԽաչուրաց վարդապետն նոցին ի յեկեղեցիս Հայոց : Եւ տեսեալ ժողովրդեանս երրորդ անգամ ծանուցեալ զերսն Նպարբոսին : Եւ ըմբռնեալ զերիս քահանայս Մլքսեթ պատրիարգիւն և եղին ի քիւրէկն : Եւ եզին երկիցս անգամ պատրիարգ զնոյն զՆփրեմ վարդապետն և նա ձերացեալ և ոչ կարէր հալածել և յանդիմանել զնոսա, զի վախեալ սարսաբէր բայց ոչ միաբանեալ նոցա չարեացն, սակայն թոյլ էր և սիրող պատրիարկութեան : Եւ ժողովրդեանս խորհուրդ մտեալ քննուութեամբ գիր մահսէր առաքեցին կարնոյ քաղաքն. և խորանօք բերեալ զԱւետիք վարդապետն զի լուեալ էր համբաւ նորա ի մերս՝ որ խափանեալ էր ի նմին ժամանակի զմտորն կարնոյ քաղաքին և քակեաց զժամատուրն զոր ծածուկ շինեալ

էին պատրիններն. և զնոսա ետուր վարանել ի քաղաքէն. և դարեցոյց զխռովութիւնն ի ժողովրդենէս : Եւ եղին Աւետիք վարդապետն պատրիարք. և նա տեսեալ զԵփրեմն ճերայեալ յոյժ դողգոջար զձեռան. և երկիցս և երկցս անգամ ասաց նմա զնալ յաթոռն Եջմիածին՝ և անդ ի ներքն՝ ապաշաւանաց մեռանիլ ընդ հարցն քո բարի է քեզ : Եւ նա ոչ կամէր բաժանել բարեկամացն և նա ետես անփոյթութիւն նմա. և եհան հրաման Եպարքոսէն յաքսորեաց մինչ սուրբ Եջմիածին և անդ առեալ վախճան : Եւ սարսեալ Ախթարմայիցն յոյժ ահայմամբ և բաղումք գոջեցին մեզա : Եւ կոչեաց զՀայոց վարդապետքն որք ոչ կարէին մտանել եկեղեցիս Հայոց. ի ահէ չար իշխանաց և պատուէր եղիր վարդապետաց քորովել զսահմանս հաւատոց լուսաւորչայիր յօրէնս : Եւ զերիս սուրբ ժողովն և զՔաղիեղանն : Եւ ետես սուրբն Յակոբս վանքն ի յերուսաղէմ Դձ. քիսէ պարտուց ներքոյ զբաւեալ՝ որք թոյլանորթք առաջնորդք. և չար իշխանք արարեալ զայն : Եւ ելեալ ճերակոյտ քրիստոնէիւք. և վարդապետօք առ թագաւորն ծանուց նմա չար իշխանաց էհ վաճն՝ և զԴձ. քիսէ պարտսրն. որ նոցա ձեռօքն եղեալ : Եւ նոյն ժամ ել հրաման տիրեացէ Աւետիք վարդապետն զառաջնորդութիւնն յերուսաղէմայ և առցէ զառաջնոց հրատան. և բարձի իշխանքն. և արար այնպէս : Եւ ամենեին հատան ձեռք չար իշխանացն որք կողպտէին յամ ամէ զգանձան սուրբ յերուսաղէմայ. և աւելուր զպարտան : Եւ սկիզբն առեալ վճարել զպարտան սրբոցն Յակոբա : Եւ ի պատահմանէ բանսարկուին՝ մինչ թագաւորն Անդրիանուպոլիս էր. և Կոստանդնուպոլսի ճաճիւնքն յարուցեալ զօրօք բազմօք մինչ ձՌ. հաշար զնացին բազում զինու. պատրաստութեամբ պատերազմ Անդրիանուպոլիս ի վերայ սուլթան Մուստաֆային : Եւ թագաւորն ժողովեալ այն քան զօրք եկեալ առ ճակատ միմեանց՝ առանց պատերազմի յաղթեալ ի կողմն թագաւորին՝ և փախեալ : Եւ նստուցին թագաւոր եղբայր նորին սուլթան Ահմէտն և բերին Ըստամպոլ : Եւ ի նմին խառնակմանն այս յերուսաղէմայ կողպտիչք չար իշխանքն տեղի առեալ վասն զի փոխադրեցան զատաւորքն և բռնաւորքն : Եւ միաբանեալ ընդ Ախթարմա

չար իշխանացն : Եւ ետուն բազում կաշառս . մինչ Խ . քիսէ զի սպանցին Աւետիք վարդապետն և նոր եպարքոսի հրամանաւ ըմբռնեալ վարդապետն եղին Թագաւորական բերդն զի սպանցին : Եւ Շէկիսլամն ոչ ետ գիր վճիռ սպանմանն՝ կարդացող և Ըրոհպանէ ասելով : Եւ անտի աքսորեցին, հետի կղզի մի, կեցեալ և անդ Թ . ամիս : Եւ նորհնձա՛ Թագաւորն սուր եղեալ կոտորեաց այնք զօրագլուխքն՝ որք յարուցեալ գնացին ի վերայ եղջօրն իւրում : Եւ մերոց արզ արարաք Թագաւորին և նա հրաման ետ եպարքոսի իւրում ալատել ըզ վարդապետն, և ի յաքսորանացն դառնալ անդրէն յաթռն իւր՝ և եղև այնպէս : Եւ բազումք ի քրիստոնէիցս ի քիւրէկն եղեալ էին՝ յորժամ վարդապետն եղին ի բերդն, և ազատեցան նոքա : Եւ այնք չար իշխանքն Հայոց փախուստ եղեալ կործանեցան առ ժամանակ մի՝ ոչ երևէին յայտնի շքրջել և ոչ կամէին հնազանդիլ անբարտաւանքն : Եւ կեցեալ յաթռն ԺԵ . ամիս : Եւ չար իշխանք կրկին յարուցին փորձանս և որոգայթ որպէս զսատանայական արհեստաւորութեամբ ըսկսան դարանել ներքուստ և ետուն Ըրայիսին կաշառս բազումս և այլոցն ամէնեցուն մինչ Խ . քիսէ : Եւ այս ամենայն դարանակալութիւնն նոցա գիտէր վարդապետն բայց յողորմութիւնն Աստուծոյ յուսացեալ էր՝ սակայն ոչ զիտէր զինքն Ֆռանգստուն գերվարելն : Եւ եկեալ ըմբռնեցին և աքսորեցին երկրորդ անգամ կղզի մի Պոհճա ատա՝ որ մօտ էր Ըստամպօլ : Եւ նստուցին յաթռն զիւր սիրելի փոխանորդ մարտիրոս վարդապետն, որ և իսկ նա յառաջագոյն միաբանեալ խորհրդոց նոցա գոյր հանապազ ի սիրտս իւր ցանկութիւնն իլել զյաթռն ծնողին իւրոց և խորամանկ լեալ որպէս զՅուդայ մատնեաց զվարդապետն իւր ի մահու տառապանաց : Տեսանիցեն հերձուածողք Թէ զինչ գործեաց Լուսաւորիչ : Եւ Մաթէոս կաթուղիկոսն Սրսա որ փախուստ էր ձեռաց Աւետիք վարդապետին յաղագս դէմի և վիճակի սուրբ Էջմիածնի կամէր հատանել և զրել ի վերա տանն Սրսա . վասն որոյ Աւետիք վարդապետն ծանուցեալ խորհուրդս զայս և յոյժ սրբոսմտեալ և առեալ Ֆէրման Թագաւորական զի աքսորեացէ ըզ Մաթէոս կաթուղիկոսն բռնութեամբ ի սուրբ Էջմիածին առ

Նահապետ կաթողիկոսն՝ որպէս և կամիցէ՝ նա արասցէ դատաստան ի Սեան, զայս լուեալ Մաթէոսի՝ եղև փախուստ մինչ վերանալն Աւետիք վարդապետին՝ և ապա յարուցեալ՝ և զնա ելին առաջնորդ յերուսաղէմայ : Եւ հերձուածողքն տիրեցին զեկեղեցիս մեր. և լուսաւորչածին ժողովուրդս անտանել սուգ սգեցեալ և արարին հալածանս ի վերայ մեր : Եւ ըմբռնեալ զլիաւորացն մերոց մինչ Խ. մարդ. երկու քահանայս զՏէր Մանուէլ, և Տէր Յովհանէս. Բ. աշխարհականաց զխոճա Մարգար Պարթևակն. և խոճա Սահակն՝ ընչ վարդապետին աքսորեցին, և մինչ Խ. մարդ ուղղափառացս ի քիւրէկն և այլք խստագոյն աեղի արգելեալ որպէս աւուրսն Թէոթոսի կայսեր արիանսսքն տիրեցին զեկեղեցիս ուղղափառաց : Եւ նոր պատուրիարգն յերուսաղէմայ զՄաթէոս կաթողիկոսն Սընա՝ սկսաւ քարոզ կարգալ զի ձեռնադրեցէ զՄարտիրոս վարդապետն և պիսկոպոս և պատրիարգ կոստանդնուպոլսոյ և այլք վարդապետք եղէն ընդ նմա եպիսկոպոսք ի մէջ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ : Եւ ժողովրդեանս խրոհացեալ ի վերայ կաթողիկոսին, եթէ չէ օրէն Սոս կաթողիկոսն ձեռնադրութիւն առնել ի վիճակս սուրբ Եջմիածնի : Եւ դարձեալ սկսան խորհուրդ առնել անօրէնութեան, և ետ խոստանալ ԺԲ. քիսէ դրամ նոյն Ըրայիսին զի առաքեացէ դահիճ, և սպանցեն ըզ վարդապետն ի կղզոջն. և զգլուխն բերցեն առ ի ցոյցս ժողովրդեանն Աստուծոյ ի նախատինս, և իւրեանց պարծանք : Եւ աշակերտն իւր Մարտիրոս վարդապետն, և Մաթէոս կաթողիկոսն և մահտեսի Հայրապետն և այլ Ախթարմայիւք զընացեալ վկայեցին առաջի Շէխիւլամի՝ բազում բարուրս եթէ արիւն նորա եղեցի ի վերայ մեր, և քեզ սապապ. տուր մեզ զգիր վճիռ սպանմանն : Եւ Շէխիւլամն բարկացեալ ի վերայ չարեաց ասելով՝ նա Ըրուհայանէ, նորա բնաւին մահ ոչ գոյ՝ միթէ Աստուծոյ գայցէ : Եւ անտի զնացին Յռանսու պալետօզն աղաչելով հակառակ է հաւատոցն ձեր, և մերոյ խանգարումն՝ զի գերեցես և տարցես յերկիրն ձեր՝ և անդ փափն որպէս և կամի սպանցէ : Եւ եկեալ կրկնակի կաշառեցին բռնաւորքն, և առեալ գիր Ըրայիսէն՝ հանցեն վարդապետն և տարցեն յայլ հեռագոյն կղզի և ի տանել ի վերայ ծովին՝ և

գիցեն յայլ նաւի Ֆռանկաց և գերեցեն. և արարին այնպէս
 Եւ եղեալ երկաթի կապանօք յոսս և ի պարանոցն տարեալ
 յերկիր Ֆրանսայու և ի քաղաքն Միսինէ բերզն : Եւ մեք յու-
 սահատեալ զվարդապետն եթէ ծովահեղց արարեալ չէաք
 գիտակ թէ ընդ որ տարան : Յետ Բ. ամսոյ եկն իւրոյ ձեռաց
 զիրն վարդապետին. և զրեալ զամենայն զիրս տանջանացն և
 ինդրեալ ի մէջ օղնո

. առ հոգևոր հօրն խնոյ Տեառն Աղէքսանդրի,
 և այլն ընդ այլ գրումն զեկուցից հրամանուցդ : Եւ մեք ե-
 շեալ ամբոխիւ արզ արտաք թագաւորին, զամենայն զիրան,
 և զկաշառօք զվարդապետն մեր գերեցուցին պալեօղի խոր-
 հրդեամբն և ոմանց մերոց թելադրութեամբն որք հակառակ
 կան թագաւորութեան հրամանի քում և թագաւորն ծա-
 նուցեալ զամենայն, ընկեց զեպարքոսն եպարքոսութենէ և
 արքտրեաց, և զԲայխն եղեալ ի բանդ չարաչար տանջանօք.
 զամենայն զիրս յափշտակեալ ի յարքունուստ : Եւ ետուր
 զեպարքոսութիւնն յայլում : Եւ նոր եպարքոսն ազատեալ
 զամենայն բանգարգլեալն լուսաւորչածին զժողովրդեանէս՝
 որք ի ձեռաց հերձուածողացն եղեալ էին : Եւ ել հրաման
 թագաւորէն այսպէս՝ եթէ որքան շայոց յաղղէն թագաւորի
 խային և Ֆռանկացեալքն ըմբռնել, և զփախուցեալքն ի տունս
 իւրեանց կոխել և հանել դնել ի թերահանէս երկաթի կա-
 պանօք, և Աւետիք վարդապետն ուր և իցէ բերցնն : Եւ սուրբ
 Ղուսաւորչի կիրակի առաւօտուն զԿոստանդինուպօլսոյ զՄար-
 տիրոս նոր պատրիարքն զոր մատնեացն զաէր իւր նա ըմբռ-
 նեալ ի Ղարաթիա Ղուսաւորչի եկեղեցւոյ միջումն որ ի նմին
 ժամի ինքն էր պատարագիչ, և իջուցեալ ի խորանէն և բե-
 րեալ բռնութեամբ առ եպարքոսն : Եւ անտի զմիւսուն Մա-
 թէոս կաթողիկոսն բերել որ էր առաջնորդ յերուսաղէմոյ
 ըմբռնեալ զնա բերեալ է. արամբ. հանեալ զերկոսինն, Մար-
 տիրոսն և զՄաթէոսն առաջն եպարքոսին : Եւ եպարքոսն հը-
 րամայեց առ մեզ թէ զո ի միջի ձերում վարդապետ Աւե-
 տիքցի՝ և հմուտ զոյի յօրինացն ձերոց՝ նա նստցի նորա
 փոխանորդ մինչ Աւետիք Ըրուհպան գայցէ և ի նմին ժամու

ոչ գոյր վարդապետ ի մերոց, և բերայք Խարբերթցի զՏէր
 Միքայէլ էրէցն որ էր վէքիլ յառաջմէ վարդապետին մերոյ
 Եւ եպարքոսն՝ առաջի սչաց Մարտիրոսին և Մաթէոսին ար-
 հաւ հանդերձս պատրիարդական ի վերայ Միքայէլ երիցուն
 պահեսցէ յաթոռն մինչ գայցէ վարդապետն, և կաթուղիկոսն,
 Մարտիրոսն, հանդերձ է. արամբք և ԼԳ. արամբք ի նմին ժա-
 մու առաքեաց կապանօք Թերսհանէ՝ որ է տեղիք գերութեան
 որ ասի դաշ քիւրէկն, և եղեալ շղթայս ծանորահակս. և
 այս հրաշս Լուսաւորչի կիրակի առաւօտու եղև՝ զի տեսցնն
 հերձուածք և յամօթ լիցին : Եւ քանիցս անգամ յառա-
 ջագոյն որք պարտաւորեալ պատժեցան, և ի յորն Լուսաւորչի
 պահոցն՝ և կիրակին հանդիպեալ : Եւ յետ այնր զտէֆատէր
 խնդրեցաւ եպարքոսէ : Կոչեաց ուղղափառացս թիւ արկա-
 նել՝ թէ որ քան Ախթարմա գոյ ի միջի ձերում, զտէֆատէրն
 բերէք ինձ : Եւ գրեցաք զգլխաւորաց ԼԳ. մարդ. և այլնն.
 Եձ. սակս ամէնն ոչ գրեցաք և տարեալ տվաք : Եւ ի սմին
 ժամու եկն Յովհաննէս վարդապետն Ըստամպօլ որ էր սերելի
 և բարեկամ Աւետիք վարդապետին, և սա էր յերկրէն Աճմա
 եղէգացի, և սիրտ սորա յոյժ ցաւեաց ի վերայ վարդապետին
 գերութեանն և վահանաւորեալ սմա եղև առաջակա Լուսա-
 ւորչածին ժողովրդեանս՝ և եպարքոսն առաքեաց գունդս միւս
 կիրակի առաւօտուն՝ կոչեաց զՅոաննու ժամն՝ և ըմբռնեցին
 ԻԳ. մարդ՝ և այլքն փախեան և ի նմին ժամու առաքեաց քիւ-
 րէկն, և սկսան ըմբռնել մինչ Զ. մարդ. և կին մի այլ ի զը-
 սանն այս Զ. ամիս է որ ոչ եղև հնար ազատման նոցա. և
 այլք փախեան յայլ երկիր. և այլք ի տունս իւրեանց են թա-
 դատի՝ որպէս հարածի եղէքն ի կայծականց՝ այնպէս հալա-
 ծեալ կան չար իշխանքն համախոհիւքն իւրովք : Եւ Յով-
 հաննէս վարդապետն արդ ետուր եպարքոսին, եթէ զքիւրէկի
 եղեալ կաթուղիկոսն և Մարտիրոս վարդապետն է. արամբք
 հանել և ի տանջանս զանազան՝ և կրակացեալ սաղավարդ ի
 զլուխ նոցա. և ի կախախանի՝ ոչ արասցես, և նորա գուղիկն
 ոչ ասեն՝ թէ որպիսի ինչ իւրիք՝ և կամ որոյ թելադրութեամբ
 և կամակցութեամբն գործեցին՝ և կամ ուր իցէ վարդապետն՝
 կենդանի է թէ մեռեալ : Եւ արարին այնպէս : Եւ ի տան-

Ձանացն բացաձայն խոստովանեցան զուղիւն՝ թէ մեք այն ինչ անուն մարդկանց կամակցութեամբն, և Ֆռանսու և չի հետն խոսիքն՝ և նաւի նոցանէ բռնեցաք Ռեձ. զուռուշ զվարձն և յղեցաք առ փափին և այլն և նոյն գրեցին ի թխդի և ծանուցին եպարքոսին, և նա կոչեաց պալեօզն և խիստ յամօթի հարեալ և նախատինք, եթէ դու զթագաւորին հաս ըրայան զփաթրիկն գողացեալ յերկրէս. և նա ինքեար հրաւրեալեցաւ թէ ոչ գիտեմ. և վարդապետն եկեալ գիրն ցոյց ետ իւրն և Բ. Տաճիկ գերի որ բերեալ էին զգիրն՝ և նոքա վկայեցին թէ՛ մեք տեսաք զվարդապետն Միսինէ քաղաքն ի Նազարէթն երկաթի կապանօք. և աղաղակեաց մեզ՝ զգիրս՝ բերաք, և պալեօզն ասաց թէ՛ տեսանեմք հարցաքննեմք զիր յղեմք թէ անդ է բերցեն՝ սակայն ես այդ բանէդ խապար չեմ: Եւ եպարքոսն՝ կրկին կրկին թեալիհարարեալ՝ թէ զայս բանս թագաւորին լուրն եհաս՝ անհնարին է եթէ ոչ բերցեն՝ մեծ փնաս կրելոց էք՝ ահա ասացի ձեզ: Եւ լուսաւորչաճին ժողովուրդքս միահապուն սուգ՝ և մեծի խոովութեան միջի եմք՝ երբև զժողու ալեա լի ծբմամբ՝ որ ոչ գոհանդարտութիւն՝ զի ամենայն աւուր Յովաննէս վարդապետին երթևեկութիւն առնեմք հանապազ ի դուռս արքունական աշխատիմք արզուհալիւ՝ վասն գալստեանն վարդապետին՝ ակն ունիմք յամենայն ժամու:

Դարձեալ զայն և ևս ծանուցից հրամանուցդ՝ ըստ առաջնոյն հրաւիրեալ նուիրակաց որք զային ի սուրբ Եջմիածնա օրհնեալ մեռոնիւ: Նախ Մինաս վարդապետն, որ բազում պատճառ եղև յարաբարդել զպարտան սուրբ յերուսողէմայ մինչ ԲՅ. քիսէ միաբանեալ ձեռամբ չար իշխանացն յորժամ եղևն առաջնորդ յերուսողէմայ: Յրկրորդ եկեալ քոլէ Յովսէփ վարդապետն, որ յայտնի ցուցանէր զինքն բարեկամերկարնակ ժողովոյն՝ որ բնաւ ոչ լուաք ի նմանէ ի քարոզեալն զմիւսերութիւն բանին և մարմնոյն անշփոթ զոլ ի Քրիստոս մի բնութիւնն, և էր սիրելի բարեկամ նոցա: Եւ սա կամեցաւ ումեմն թաչատուր արեղայի միոյ՝ տալ գաւազան վարդապետական կարգի՝ զի յայտնապէս քարոզել զեկեղեցիս Հայոց զազանդն Քաղկեդոնի: Եւ լուաք զայս իրս գրեցաք գիր

առ սուրբ Գէորգա եկեղեցին ի ձեռն քոյէ Յովսէփ վարդապետին, մեծ գուշութեամբ աղերսանօք՝ զի մի տացէ գաւազան և իշխանութիւն նոր ոմն հերձուածոյն : Եւ նա անտես արար զԿիր մերոյ աղերսանաց, առեալ նոցանէ ոսկի՝ և արծաթ : Սկսաւ կոչումն նոյնեաց զամենայն հերձուածսն յանուանէ և ոչ զՔաղկեդոն, և ոչ զԼեոն : Եւ այնու ճոխացան շատացան հերձուածողքն օր օրէ : Եւ տեսեալ զլուսաւորչածին ժողովրդեանս՝ զգաստ անիծելոցն որք շատացան, վասն որոյ միաբանեալ մերոց զրեցաք զերս եղելոցն մահսերական կնքով՝ առաքեցաք առ կաթուղեկոսն գանկատ ԻԻ. չար իշխանաց ի Անդրիանուպօլսէ, և այլն ի Կոստանդինուպօլսէ : Եւ հողևոր տէրն առաքեաց նոցա անէծս՝ և կապանս : Եւ զիրն բացեալ յեկեղեցիս մեծի հանդէսիւ՝ ով հրաշալին երգով՝ կրկնապատիկ նոյնեցին դերաբոյս հերձուածողսն յանուանէ : Եւ որոշեալ ի բաց հերքեցաք զուրացեալքն յեկեղեցւոյն Աստուծոյ : Եւ ի յայնմ ամի հրաւիրակն ի սուրբ Էջմիածնա վարդապետն եկեալ մեռոնիւ, և այնք դասն Ախթարմայիցն սկսան պատիւս առնել նմա խարեութեամբ կերակուրս պէսպէս՝ և ըմպելեօք խնէշացուցեալ. թէպէտ ինքն ոչ էր նոցա աղանդիւն սակայն ոչ յանդիմանեալ՝ և ոչ սաստեալ. և ոչ զսահման հաւատոյս արտաբերութեամբ քարոզեաց : Եւ մերոց ստեպ ստեպ գուշացուցեալ՝ զի է քեզ՝ ընդէր ոչ քարոզես զսահման հաւատոյս մերոյ՝ յանդիման կացուցանելով զուղղափառութիւն լուսաւորչադիր յօրէնս շարոյ. սաստելդ նոցա դառնալ ի յուղղութիւն : Եւ նուիրակն Էջմիածնա զայս պատասխանեաց մեզ Ձի՛նչ և ս փոյթ է ինձ, զի ոչ է հրամայեալ վեհէն իմոյ՝ գալ ի տեղս արիանել խոսիութիւն, զայն ևս ունիմ հրաման առնել զնուիրակութիւնն իմ և տանել յաթռոն առ վեհէն իմ : Եւ ել գնաց Անդրիանուպօլսիս՝ զայն բանադրեալքն ի վեհէն ԻԻ. զլիաւոր արանցն պատուեցեալ ըմպելեօք որպէս և զրեցաք ի վերոյ՝ առեալ ինոցանէ Ա. քիտէ ստակ առանց զղջանալոյ՝ որ հաւանէին ամէն մարդ մին մին քիտէ տալ յաթռոն՝ զի բարձի բանադրանքն, և խաբեցին զհողևոր տէրն եթէ զղջացան՝ և բերին արձակումն, որ նոքա մինչ ցայսօր ի նմին դառնութեանն կան և քնան և գործեն չարութիւն : Բնաւ ոչ զարձան Ախ-

Թարմայու թենէ՛ և գոն՝ յամառեալ և շարաշեռեալ իրերաց
 պիղծ խմորուն Քաղկեդոնի : Եւ մերոց նախ առաք մահսէրն
 ոչ ինչ արարին վասն կաշառոյ՝ հրաւիրեալքն Եջմիածնի :
 Վասն որոյ՝ զի արդ սո՛չ ողբասցուք ծնունդք սուրբ հօրն մե-
 րոյ Գրիգորի՛ որ բազմաչարչար վշտանօք ծնաւ զմեզ ի խա-
 ւարէ ի լոյս : Որոյ հիմանն շինեցաւ եկեղեցի հրամանաւ հօր
 Որդւոյն Միածնի՛ սուրբ Հոգւոյն, ըստ որոյ կոչեցաւ Միոն
 հաւատոյ տանս հայկազնւոյ, այժմ՝ որչիք Միոնի՛ արկանեն
 զարհամարանս Միոն, հեշտարառիւ շրջել զհաճոյսն հեշտա-
 սիրաց՝ յաղագս ոսկւոյ՝ և արծաթոյ : Ի թիւ արկութեանս
 զայս ինչ ամբաստանութիւն մի իմացի մնաս յաթոռոյն,
 և զգանձանակի նմին ասեմք յաղագս ոսկւոյ և արծաթոյ.
 քաւ և մի լեցի զայդ մտաւ ածել : Որպէս զի պարտական է
 որդիք հատուցանել զվարձս ծնօղի զնոյն պարտական եմք մարմ-
 նոյ, եթէ ոչ հոգով : Յաղագս այնր գրեցից հրաւիրեալ նը-
 ուիրակաց՝ որք երես պաշտութեամբ շրջին. ոմն կաշառօք.
 և ոմն զղիկ գոլ երկչոտութեամբ երկնչիւր յումեք : Եւ ոմն
 թէ ինչ փոյթէ ինձ քարոզել զուղիղն ընդ զէմ՝ երկարնա-
 կաց քան զի ժողովն իմ անձինս ոչ արկանեն փող ի գան-
 ձակս իմ զայս և այս բան նիւթեն ի միտս իւրեանց վասն
 մոլեղնութեամբ խաբանեն ճշմարտութիւնն, և ոչ յարձա-
 նացուցանիցեն զբանն Վիւրղի՛ որոյ հիմանն շարահիւսեցեալք
 գոն յոլով վկայս՝ հայրապետաց, և աստուածաբան վարդա-
 պետաց՝ նախնեաց սրբոց զրեւոյ ի գիրս աստուածաբանու-
 թեանն իւրաքանչիւր ումեք : Եւ որ ոք ծարաւի իցէ՛ խնդ-
 րիցէ և ի գտանելն նախ արբցէ ինքն կատարեալ. և ապա կա-
 րողացի արբուցանել ոմանց որք ծարաւի իցեն, և ասէ՛ առ-
 ցէ զվարձս բազումս : Ա՛րդ ոչ բնաւ զգուշացուցեալ եկե-
 լոցն ի գիր առեալ բանիցս, որոյ զանց առեալ զհիւանդս ան-
 բուժելի և գնացին. մնաց որպէս զիշատեսակ ցաւս փոխելով
 միմեանց շտտացեալ բազմացան : Հինգերորդ, եկն հրաւիրակ
 այս անուն՝ վարդապետն ի սուրբ Եջմիածնէ՛, միամիտ գոլ. զղիկ
 բնութեամբ նա ևս ընդ նոցին առեալ նմանութիւն բերէ
 զինքն վախեալ ումեք : Զայս ինչ հարկ եղեալ ժողովորեանս
 զրել զպակասութիւն իր մի մնասու. ընդգէմ կանոնական հարցն :

Եւ Ըստամուտու սահմանս մօտ Ղալաթիա քաղաքն երիտա-
 սարգ մի ու մեմն զսարի զկուսութիւնն ներգործեալ խարանօք
 իբր նա առցէ իւրն կնութիւն. և ի զիտանայն ոչ էառ. այլ
 յայլում զստերուջ զբաւեցաւ նշանօք : Եւ եկն զաէր աղջկանն
 առ պատրիարզն, և նա ոչ ետ հրաման առնել յետինս, այլ
 զայն՝ որ զիտաց զնա : Եւ երիտասարդն, եկեալ առ նուիրակ
 վարդապետն, և նա զրեալ զիւ այսպէս : Ես նուիրակ վար-
 դապետս ետու հրաման Ներսէս վարդապետի խաթերն, որ ի
 ժամանակին պատրիարգ էր. յետինն առեալ պսակեցէ և ոչ
 զառաջն զիտացեալն : Վասն որոյ բազումք զիտողաց զայս.
 և յոյժ զզուեալ վիրաւորեցան, եթէ յօրէնս մեր ի թուլա-
 մորթ սևագլուխոց է աւերումն, և քանզումն ամենայն իրաց
 աւանդ որ ոչ ունիմք զսոցա քննիչ կաթուղիկոս ասէին : Զայս
 մեծ ի աղերսանօք. ինչդրեմք ի քէն առաքեցես խորխաց աս-
 տուածաբան վարդապետացդ երկուս և կամ երիս, որ մինն ա-
 շակիրտացդ յերուսաղէմայ եկեալ Ըստամուտու. և սիրեցեալ Ա-
 լետիք վարդապետէ յոյժ վասն առաւել զիտութեամբն և
 քարոզէր ընդ դէմ երկաբնակ ժողովոյն՝ վասն որոյ սիրեցեալ
 յոյժ ի ժողովրդենէս : Եւ վարդապետն զնա արար ամենեցուն
 հաւանութեամբն հաւատարիմ յերկուց յաթուոց իւրն վէ-
 քիլ յերուսաղէմայ և Կոստանդնուպօլսի, և բազումս մոլո-
 րեւոցն դարձոց զուղղափառութիւն գերագոյն քարոզութեամ-
 բըն և կարկեսաց զբերանք երկաբնակաց հակաբանութեամբ, և
 ինքն էր Իզմիրցի Ռհաննէս վարդապետ աշակերտ հրամանուցդ
 ասէր զինքն և նա յղեալ առաքեցես միայկէս ընդ վարդա-
 պետացդ՝ եկեալ մի իթարեցէ զմեզ մնալով աստն՝ յամ. յա-
 մէ, ուսուցանել ի զպրոցի զմանկունս քո, որպէս և վայելէ
 բազմութիւն ժողովրդեանս, որքանութիւնն գո ձմ. զոր օրհ-
 նեմք զԱստուած և զքեզ որ յառաւելիմք ամենայն քրիս-
 տոնէից ազգաց : Մի իթէ ոչէ արժան զպրատանց և վարդա-
 պետք զիտունք, զեանդանալ ի տեղս որոց ուսեալ պայծառա-
 ցեալ ճոխացի յազգս որով մաքրեալ սրբիցիմք պիղծ խմո-
 րուն Գաղկեպոնի : Գարձեալ զի յամենեցունց ինչդրքն կըրկ-
 նսպատիկ և հազարապատիկ ինչըրելով ինչդրեմք ի սուրբ հօ-
 րէդ՝ քանզի ճարն մնաց հրամանուցդ՝ միայն զիւր մի ի վերայ յա-

Թողալի՞ն Պետրոսի առաքելոյն՝ Բ. եպիսկոպոսիւ՝ ճանուցանել նմա զամենայն զիրս խաբէութեան ասխարմայ ուրացողացն մերոց՝ և խնդրել զեպիսկոպոսն Հայոց՝ զի ոչ է օրէն զեպիսկոպոսն Հայոց երկաթի կապանօք զերեցուցանել լոկ աշխարհական մի՝ և այլ բանք յայլում անգլե՞ջ գրեցաք. բայց հրամանուցդ որպէս վայելէ՝ խնդրեմք վարկազակի զպաղատանս շնորհեա՞ մեզ՝ և առաքեա բազում մասամբ և բազում օրինակօք : Մինչ զի մի մահացուցանիցեն զի յողորմութիւնն Աստուծոյ յուսացեալեմք, զմահ և զկեան ի ձեռին Աստուծոյ է : Դարձեալ զնոյն կրկնեսցուք վասն վարդապետացդ գալիտեղս՝ քաջաբանք յամենայն կողմանէ ոչ յերկնչել յումեքէ և ոչ ի արքունուստ զարհուրանաց՝ որպէս զտեղի եղեայ քաջասիրտ զՈվհաննէս վարդապետն եղեգեցի որ բազում անգամ ընդ գէմ թագաւորացն բռնութենէ ոչ երկնչել՝ կալ յանգիման տալ պատասխանիս՝ որպիսի իրացն առնել զեկեցումն և յոյժ ներհակ ասխարմայիցն և խնդրէ զԱւետիք վարդապետն վասն այն մեք զսա արգելեցաք կալ ի տեղս մինչ վարդապետն գայցէ : Եւ հրաւիրեալքն ի սուրբ յաթոռէն՝ զի մի լիցի ըստ վերոյ գրեալ թուլասիրտ նուիրակաց. բայց Իզմիրցի Յովհաննէս վարդապետն միապէս գայցէ : Դարձեալ և ևս խնդրեմք վասն տպագրութեանց՝ որ ոմանք զսուրբ գրրեանս ապականեցին : Այժմ խնդրեմք հաստատումն տպագրութեանցն գրել ի վերայ Գրիգոր դպրի՝ զի սա ընդ մեզ է և հաւատարիմ սուրբ յաթոռոյդ մահուչափ : Եւ ոմանք ընկերացեալ ընդ սմա վասն այսմաւուրբ տպելոյ, և տպելին Գրիգոր դպիրն ԹՃԿ. այսմաւուրբ. և ընկերք անողորմ զրկել համեցան զԳրիգորն : Եւ հրամանքդ արացես զգատասան որպէս վայելէ՝ և զայն ի յայլում տեսցես զի մի երկարացի բանքն ի տեղիս՝ և ևս տուգախեցի այրի Ղազար էրէցն որ Իզմիրցի Յովհաննէս վարդապետն տեղեակ է բանիս և այն Ղազար էրէցն՝ ստաբան և խտրեա՞ բազում վնաս հասոյց այս Գրիգոր դպրիս և առեալ բազում տպագրեանց կաղպարներն փախեաւ : Եւ խնդրեմք զնա ձեռացն առնել՝ և յղել առ մեզ : Եւ դարձեալ այսօք են դասք զխաւոր ասխարմայիցն, սք պատճառ ելին բազում մուրեցուցանելոյ և հակառակ

սրբոց յաթոռոց և քակտիչ լուսաւորչադիր յօրինացս մեր. և այլայլողք, անարգիչ և հայհոյիչ եկեղեցւոյն մեր : Եւ անհնազանդ սուրբ Էջմիածնի : Վասն որոյ խնդրեմք ի սուրբ յաթոռէն և ի սուրբ Իջման տեղէ՝ և քո անանց հրամանէն որ ունիս իշխանութիւն ի Քրիստոսէ՝ ճշմարիտ առաքեալն Քրիստոսի՝ դու՝ որ կարող ես կապել և արձակել յերկրէ յերկին մարդիկք և հրեշտակ՝ և ամենայն ոգիք : Եւ առաքեսցես զանէճս՝ և զկապանս անթողելի յանուանէ զամենայն հերձուածողսն և զկնքեալ մոհրերս պահեսցես ընդ քո մինչ վկայութիւնն վասն դարձի սոցա ոչ եկեացէ. զկնքս այս ամենայն առ յաթոռ քո և կամ ինքեանք եկեսցեն յաթոռ քո, ոչ լինել ներուամս՝ որպէս զի տեսանեմք ճշմարիտ զեղճ անիծելոցն :

Աստուածածնա եկեղեցոյ հերձուածողքն են,

Նախ ճամճը որդիք կարապետ էրէց, Մկրտիչ էրէց, և իւր եղբայրն Եղիան. սա աշխարհական է.—Ծուռ վլի որդի Երեմիա էրէցն, և իւր եղբայրն Խաչատուր էրէցն և սոցա եղբայր Կիրայր Յակոբն որ բազումս մոլորեցոյց.—Սիմոնի Չաքարիա էրէցն. . . . ումնն հերձուածողի և ոչ սատակեցաւ. Ճլեցի թոռ Սարկոս էրէցն :

Դարձեալ և այսոք թէպէտ ոչ են հերձուածողք, այլ միաբան հերձուածողաց վասն կորստեան վարդապետին և հակառակ սուրբ լուսաւորչի յաթոռոյն և ոչ հնազանդ ժողովրդեանն Աստուծոյ են այսք :

Եւ Աճէմ վարդան էրէցն, և Բէչի Արութիւն էրէցն.—Եւ Թաւութի որդի մահտեսի Սահակն և իւր եղբորորդին Ռհանէս.—Աստուծի Առաքելն.—Եւ են այսօքիկ դասք ախթարմայիցն զլիաւորք.—Նախ Թիւթէր որդիք Ղոյումճի Արութիւնն և Ովհանէան և Յակոբն Սուկիաս.—Շահամիր որդի Առաքելն, Ղալանկճ Ղոյումճի Մկրտիչն. Մըխլայիմ որդիք կարապետն և Ովհանէան և իւր տղան ի Հոռոմ յղեալ է.—Թէլճի Մկրտիչն.—Թէլճի Խաչատուրն.—Չալըխ Աբրահամն.—Ղուռու պոխ որդիք Պէկէլէրն և Տէլվէթն.—Ապէր որդիք. Նիկողոս և Ովհանէս.—Քէպէճի որդիք, Պուռնազ տիրացու Գրիգորն.—Քոճէք որդի Յակոբ, և վարախճի պատմաճի Սիմոնն և իւր տղան ի Հոռոմ յղեաց.—Քիւլհանճի որդի մահտեսի Պետրոսն : Ղուռուճոց գլուխ Սաախան, և իւր տղան Իփիքճի Ովհանէան.—Ոսկերիչ Ովհանէան. Եւ այս վերոյ գրեալքս իւրեանց կանամք որդովք և դստերովքն են հերձուածողք.—Էսկիճի որդի Վէլլր խանն զերդի Գրիգորն իւր կնանն Փէսան Աբրահամն.—Շալխամ զլի

սա եղև պատճառ վարդապետին աքսորման եւ Սրմակար, իչճի վէղիրի տանն եւ ձեռամբ սորա կաշառեցին եւ արարին որպէս եւ կամեցան անիծեալքն. — Ղոյումճիոց Իքթի պաշի Արութիւնն հերձուածող :

Եւ այս են սուրբ Գէորգա եկեղեցոյ հակառակքն եւ Ֆրանկացեալքն :

Քեամիրճի որդի Կովրասա էրէցն. — Կարապետ էրէցն. — Ղէվնա Յակոբ էրէցն, — Մաթէոս էրէցն. — Ջիհէնէմ Մէրսիէնի Նսայի էրէցն. — Դաւիթ էրէցն. — Աղարիայի որդի Կարապետ էրէցն :

Եւ այսոք են զխաւոր ասթարմայ աշխարհականք.

Սահատճի Գրիգորն. — Սչան Յակոբն. — Ղէվնաի եղբայր պէնկլի Արութիւնն. — Քոստէպէկ Մինասն. — Ղասէֆէթ որդի Մինասն եւ իւր տղան Նսային. — Էքմէկճի որդի Գրիգորն. — Չուլա Յարութիւնն եւ իւր եղբայրն Ապուլասն. — Հաւկուր Մկրտիչն. — Քեմխատի Արզմանն. — Ոսկերիչ Սողոմոնն. — Ալթուն թոփ Ուլանէսն. — Պուռասցուն փէասն. — Պուռնազ Խաչատուրն եւ իւր որդիքն. — Ոսկերիչ Ուլանէսն. — Էլպէկի որդի Նրեմիան. — Ախթեր որդի Գէորգն — Ղաղէզ Մէլքոնն եւ իւր որդին Հումբուզն, որ փաթեւա լեալ է Ֆրանկաց եւ սա եկն Ղստամպուլ եւ մեք յանդիմանեալ նմա եւ նա անդրէն փախաւ ի Հոմ :

Եւ այսոքիկ են հակառակ սուրբ յաթոռոց վասն հարամխոռ թէլ պիսք, որ այժմ եղեալ են կորազլուխ, թէպէտ սոքա ոչ են ասթարմայք, այլ պատճառք աւերման եւ սուրբ Երուսաղէմայ պարտքն սոքա են արարեալ : Եւ վարդապետին աքսորմանն եղեն սոքա եւ այլ չարաբարոյս յարուցանեն միաբանելով ընդ ասթարմայիցն վասն օտար իրեացն զորձեն զայս եւ են այսոքիկ.

Նախ ոսկերիչ Սրապիտնն. — Ճիկէրճի Քիստոստուրն սա Ֆռէնկ. — Ժամ տէլիսի ոսկերիչ Մկրտիչն. — Քեապէպճի ոսկերիչ Մկրտիչն. — Քէրէստէճի Գասպարն. — Ոսկերիչ Ղաղարն. — Քէրէստէճի Յակոբն. — Ոսկերիչ Նուրին. — Ոսկերիչ Մարտիրոսն. — Պուռասալու թէլպիս Գրիգորն, որ հայնոյիչ է յօրինաց. — Խալէմքէր Մաղաքիան. — Սառած Պաղտասարն :

Եւ այսոք են կին արմատք.

Որ սոքա պատճառք եղեն վարդապետին աքսորմանն, որ սոքա իչճի գոլով մտանէին առ կանանց — մեծամեծացն եւ միաբանեալ ընդ ասթարմայից տալով ձեռամբ սոցա, կաշառք նոցա կանանցն եւ նոքա ընդ արանցն զողանալով զմիտան. եւ այսպիս ասիթ եղեն անիծեալք կինքս այս բողաբարոյք մուղտանքն եւ են այս,

Իչճի Մարթա կին. — Ղաղէզ Իբրահիմի կինն. — Մուրացիանի սուղաշխարող աղջիկն. — Եքսէրճի Եղիայի կինն. — Թոփալ Եղիայի կինն եւ աղջիկն Ֆռէնկաց ապաշխարող. — Պողաճու աղջիկն որ է ապաշխարող. — Շանճինի կինն եւ աղջիկն ապաշխարող. — Ալթուն թոփի կինն եւ իւր

Թող շխարհող աղջիկն. — Տէփանի քէյին եւ Էղիղ կիկն, — Ռուկերիչ Չա-
քարիան. — Աճէմ Արուժիւն. — Չէբէթիայի որդին Աստուրն. — Քէպէճի
Սէրգիան. — Պօլալուի Գրիգորի աղջիկն — Թումանճանի աղջիկն :

Եւ այսոքիկ են սուրբ յաթսոյն Եջմածնի եւ սուրբ Գրիգոր Լու-
սաւորչին հակառակ եւ առիթ աքտորմանն վարդապետին :

Նախ Մաթէոս կաթողիկոսն Սըոս, սա բազում ժամանակ յո-
ղով գոյն գործեաց զԵջմածնի յաթսուն հատանել. բովանդակ յերկիրն
Հոռմատանն կապել ի Սըոս տանն եւ աստ Աւետիք վարդապետն ընդ
դէմ կացեալ նմա յաղթեաց որպէս եւ զրեալ ի վերոյ :

Երկրորդ Մարտիրոս վարդապետն, որ ձեռնասուն աշակերտ էր Ա-
ւետիք վարդապետին սա միաբանեալ ընդ Մաթէոս կաթողիկոսին եւ
մատնեաց զվարդապետն իւր. — Եւ Պալք-քէպէրցի Հայրապետն :

Եւ ոտքա ոչ են հերձուած ախթարմայիցն, այլ միաբանեցան ընդ
նոցին չարեացն, վասն կորստեան վարդապետին, որ այժմ պատկաւ
կործանեցան ի թաղաւորէն, որ բանդի են ի քիւրկիկն այժման մարդով :

Եւ այս են Պալթու սուրբ Հրեշտակապետ եկեղեցու.

Նախ Քեօմուռճի քեօս Ալիքսանն. — Նմուսիկ էրէցն. — Եւ Մար-
տիրոս մեծ էրէցն. — Եւ Վինիկանէ Ովանէան :

Եւ այսոքիկ են դասք ախթարմայից զլիաւորք :

Ղազանճը որդի Սարգիս էրէցն եւ իւր եղբայր տիրացու Արուժիւնն
կնան իւրով. — Եւ Չալլիս Ահարոն էրէցն. — Դժոխք կարապետ էրէց :

Եւ միաջէն արեղայ Ղալաթացի, որ զպրատուն աղայք կարգացնէ.
եւ մոլորեցոյց բազումս եւ կորազլուի արարաք :

Եւ Խաչուրաց վարդապետն որ սա եղև պատճառ ամենայն մեղաց
մոլորութեանց. — Եւ սուտ վարդապետացն. — Եւ հերձուածող սահաթ ջի
Սարգիս վարդապետն. — Եւ Պէշիկուացի Յովսէփ վարդապետն. — Սվաճի
Յարութիւն վարդապետն. — Ղալչնճի Յովսէփ վարդապետն. — Խաչատուր
իրիցու եղբայր Պոզոս վարդապետն :

Էպուզիկացի Սահակ վարդապետն, սա ոչ է Յռէնկ, այլ հակառակ
կեսարացի եոթլազ Սահակն, սա ի Կոստանդինուպօլիս ի սուրբ Աստ-
ուածածնա մէջն եւ այլ երկու վարդապետաք կալիսկոպոս ձեռնադրե-
ցաւ ի Մաթէոս կաթողիկոսէն եւ էր մինն Մարտիրոս վարդապետն որ
մատնեաց զիւր վարդապետն, սա յետ աքսորմանն իւրոյ վարդապետին
ձեռնադրեցաւ կալիսկոպոս եւ պատրիարք ի վերայ Ըստամպօլու :

Կայծակի աշակերտ Սարգիս վարդապետն սա եկն Ըստամպօլ թուրքի
օրինաք բոց մի էաւ իւր կին, եւ յետ ժամանակաց թողալ զկինն եւ
այժմ վարդապետ է :

Երեմիա վարդապետն սա միաբանեալ յերուսաղէմայ աւերիչի եւ
հայրամխոսացն :

Եւ Յեկիփցի Գրիգոր էրէցն որ մականունն ղեռ Մուստաֆա ասի :
Ուսկուսարցի Ալեքսանդրի Աբրահամ էրէցն . — Եւ Էրզրուումցի Մե-
րոպ վարդապետ աղանդիւն Ֆռէնկ :

Եւ այս են Ղալաթիոյ սուրբ Լուսաւորչի եկեղեցոյ հակառակք
հերձուածողք զլիսաւորացն :

Նախ Յակոբ էրէցն եւ իւր որդիւքն, սահատծի Դանէլն, եւ միւս
եղբայրն . — Այրի Աբրահամ էրէցն . — Ներսէս էրէցն . — Ուսկի էրէցն :
Տիրացու անանիան :

Եւ այսոքիկ են զլիսաւորք արթարմայք ուրացողք

Նախ նորտունկն եւ իւր որդին, որ ուղարկեալ ի Ֆռանկստուն, եւ
իւր կինն եւ փէսան որ բաղումս ուրացոյց :

Հալածի փէսա սիրացու Գէորքն, որ իւր կինն սատակեցաւ, եւ
Ֆռէնկ փաթերայքն թաղեցին :

Քըչըլ որդի Յակոբն . — Քէրէստէճի Շահինն եւ իւր կինն, եւ սոքա
ղայրն թէրսհանէն բանդի է, եւ կինն ի զընտանն է, ընդ արթարմայիցն
Մանճուղունլու պալի զալիֆայն :

Յակոբ որդի Գէորքն եւ եղբայրն Արուժիւնն . — Ազնաւորի փէսա
Սարգիսն եւ իւր կնանն . — Պոչախչի Գասպարն եւ կինն եւ որդիքն :

Ոսկերիչ Մլքսէթն . — Սահատծի Թաթոն . — Սինան որդի Յարութիւն .
— Տէր Անտոնի փէսա Ներսէս էրէցն եւ իւր որդին եւ երկու աղջիկն,
որ Ֆռանկաց ասպշխարոց եղեալ է . — Զուխացի Արուժիւնն եւ իւր կինն .
— Զուլախ որդի, իւր կնանն : Սարգսի փէսա թիւլպէնճի Յարութիւնն .
— Պողատծի Ազարիան . — Էսկիճի որդի Մուրասն . — Էրէց որդի Անտոն,
եւ եղբայրն Ունանն . — Ղապամաճի Խարայէն . — Ղափամաճի Պետրոն
եւ իւր որդին Գրիգորն . — Ղափամաճի Գուկասի որդի Յարութիւնն . —
Մըշիխի որդին Պետրոն որ Ֆռէնկի փաթերայ է . — Մուլլի Մարտիրոն .
եւ երկու որդիքն իւր Ֆռէնկիստուն կարգալ յղեալ է . — Սահատծի թէրճի-
ման Յակոբն — Զէմպէրէքճի Պօղոն . — Զէմպէրէքճի քօր Նուրին եւ
իւր տղան . — Ոսկերիչ Ղափլանն . — Ոսկերիչ Մեւքոնն . — Ղալէմքեաք
Վարդերեսի որդի Ղամբու Գրիգորն, որ իւր տունն Ֆռէնկի ժամուն
վաղմ արարեր է : — Հաճի Ուսէվն . — Հաճի քօր Պետրոն . — Պօլին աը-
ղան Ֆրտանն . — Էրզրուումցի քօռ Ղազէրն . — Սահատծի Էլման . — Ալան
ողլու Առաքելն . — Սահատծի Աւետիքն :

Ի թվականութեանս մերում գրեցաւ ի մայրաքաղաքն Կոս-
տանդինուպօլիս ՌՃԾԵ. Գեկաեմբերի քսան ,

Նուստո ծառայ Հօրդ խոյ, եւ վէքիլ վէհին խոյ Աւետիք Աստուա-
ծաբան վարդապետի եւ պատրկարոց յերուսաղէմայ, եւ Կոստանդինու-

պօլսոյ, յաթոռոց սպասաւոր Միքայէլ էրէց, Խարբերդցի. գիտութիւն լիցի վէհոյ խմբ, զայս ամենայն վարդապետք, մինչ որ քո յաթոռոց չըգան, եւ տեսնես զընտրութիւնս նոցա եւ զվարս, եւ ապա ունիցին զիր հրամանուցդ, չըջարբերկրել եւ քարոզել եւ մեք տեսցուք եւ ընկալցուք զայնք: Եւ թէ ոչ ունիցին ոչ ընդունիմք զնոսա, վասն այսմ պատճառի աշխարհս ապականեցին:

Յովնանէս վարդապետ քարոզող համայնից.

Խաչատուր վարդապետ աշակերտ Եբբեմիա.

Ահար.
.

Եւ այս աւերեալ կնիքս խաբնօք կոխեր են եւ սա բողանար եւ արբեցող, ընդ գողան եւ բողն չըջի եւ ոչ Լուսաւորչի ժողովրդեանս, ոչ եկեղեցի մտանէ: Եւ եւս զիչեր ցերեկ անէ տուն ընդ հակառակորդաց միաբան եւ պատճառ վրդովմանց:

Լուսաւորչի ժողովուրդք.

Սուրբ Գէորդ եկեղեցւոյ միաբան քահանայից.

Խուշա Մարդար Պարթեւազն.

Սուրբ Գէորդքա են այսոնք ալ.

Սուրբ Գէորդ եկեղեցւոյ ժողովուրդն են.

Սուրբ Աստուածածնա միաբան քահանայից եւ ժողովրդոց.

Մայթէոս Զուղայեցի Թօպլենց.

Տալուդ Խալֆան.

Խօճա Գաւիթ.

Կարապետ.

Եբբեմիա.

Գրիգոր.

Մահտեսի Աբրահամ

Գրիգոր Խալֆան.

Չաղմախի որդի Սահակ

Լուսաւորչի ժողովուրդք

որ աքսորանքների հերքիչ:

(Բոլոր կնիքները միասին 448-ն են, որոնց մի քանիսի տակին վերոպրեալ ստորադրութիւնները կան):



Գ. Շ—յի. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

1842 թիւ . օգոստոսի 12 Մաղարթու Նա-

խալկայի վանքումը :

Շարունակութիւն.*

Մեծ հանդէսով, առօր—փառօր մտայ Նախիջևան : Քեայբայի խանը, իւր ամենայն երեւելօքը դուրս էր եկած ինձ ընդ յառաջ : Հարիւրաւոր ոչխարներ մատաղ մորթուեցան ճանապարհների վերայ, ուստի անց էի կենում : Գափ, թըմբուկ, դուռնայ փչելով առաջիս, ես ևս ուռած փքուած ձիոյ վերայ նստած հեռուում էի նոցա : Տեղւոյս խանը ևս չհամարձակվեցաւ չհեռուել Խոյի խանին—ու՛թը օրու մն, Սարգարի պագեները, երկու հարիւր ընտիր ձիաւորք, հնազանդութեան գրի հեռը պատրաստեցի, ճանապարհ ձգեցի Թարվէզ, և իններորդ օրը ինչ պատուով մտած էի Նախիջևան, նոյն պատուովը դուրս եկի և ճանապարհս շարունակեցի դէպ յերեւան :

Հէնց հասայ Շարուր, ուր մին գետ կար, որ Երեւանու և Նախիջևանու սահմանն էր. Սալիմ աղայ Մամադ խանի մօտիկ ազգականը, հիւրընկալութեան պաշտօնիւ, քանի մի հարիւր ձիաւորով սպասում էր ինձ էն տեղ : Մինչև Երեւան քանի մի Հայոց գիւղէր անցկացանք : Էն խղճահարութիւնը և աներևոյթ սէրը, որ մինչև Հայերին չէի տեսած, ինչպէս պատմեցի, զգում էի յառաջ, մինչև ցայսօր ևս ինձ ղարմանք

* Տես Կոնկան Գ. տարւոյն Զ. թուումը. երես 460 :

էր գալիս, թէ ինչն՞ այնուհետեւ երբ տեսայ Հայերին էն խղճութեան մէջը, էլ չէի զգում, որպէս թէ սատանէն յամառացրել էր կամքս : Երևան Մամադ խանը և ևս աւելի և ջերմեռանդ հիւրընկալութեամբ ընդունէց ինձ իւր պալատումը, որ բերթի մէջն է : Եղբորդիքը և իւր մօտիկ ազգականներն էին ինձ սպասաւորում :

Վրաստանու Հերակլ խանը, Նադր Շահի հետ քանի մի հարիւր ձիաւորով գնալոյ համար Հնդկաստան և երկար հաւատարիմ ծառայութեանց փոխարէնը, ստացած էր Նադր շահէն Երևանու հարկէ մին մասն իւրեան և իւրայնոց թուշակ : Նադրից յետոյ էս երկար խառնակութեանց աղագաւ, Երևանու Մամադ խանը նայելով իւրեան դրացի խաներին, որք ինքնադու ին էին և ոչ որի հարկ չէին ապլիս, ինքն ևս ցանկացել էր նմանիլ նոցա, վասն որոյ և զլացել էր նշանակեալ գումարը տալ Հերակլին : Հերակլն ևս իւր իրաւունքը չկորցրնելոյ համար, քանի մի անգամ Վրացի և Ղէկլի զօրքով եկած էր ու պաշարած Երևանը, ու ստացել փոքր ի շատէ կամ բոլոր գումարը ու վերադարցել էր : Ի հարկէ և Մամադ խանը որքան կը հատուցանէր Հերակլին, մինին երկու կառնէր Հայերիցը, թէ անհաւատներ լի փողն, անհաւատին թող հասնի : Շատ անգամ Մամադ խանը հրաւիրել էր դրացի խաներին գալ օգնել ինքեան ընդդէմ անհաւատին, այսինքն Հերակլին, բայց նոցա դուրսը ևս խառն լինելով, չէին կարողացել կատարել նրա խնդիրքը : Մամադ խանը ոչ թէ միայն հարկ հատուցանելոյ համար Հերակլին, փոքր պատճառի էր սպասում զլուս վերցնել Վրացւոյն ընդդէմ, այլև համեմատ մահմէդական կրօնից, լաւ ևս էր իւր հաւատակցիցը կախումն ունենայ քան թէ այլակրօնիցը : Հրամայած էր ինձ Սարգարն, որ աշխատեմ հաւատացնել Մամադ խանին, կտրելոյ է նորա կախումն Վրացուն, եթէ հնազանդութեան պայմանները կատարէ, և եթէ վախենում լինի Մամադ խանը Հերակլիցը, դրեմ զօրք զրկէ Թարվիզու Երևանը պահպանելոյ համար :

Մամադ խանը, որպէս երևում էր պարզ ինձ հետ խօսելուցը, շատ ուրախ էր Սարգարի առաջարկութեան վերայ, բայց երկիւղ էր կրում Պարսկական զօրքը Երևան մանկէն,

Թէ հեշտ է բերին, բայց արտաքսելը զժուար, և անհնարին ինձ նման անողոր տիրապետողի համար :

Հերակլը լսելով իմ գալստեան լուրը, ծածկաբար գիր էր ուղարկել Մամադ խանի վերայ, շնորհունէ ինձ, ապա թէ ոչ պատրաստ է վրացի և յեռնական զօրքով գալ, աւերել նորա երկիրը : Մամադ խանը մնացել էր երկու ջրի մէջին շուտված : Ի վերջոյ Հերակլի գիրը ինձ տուաւ, և ես ուղարկեցի Սարդարին թարվէզ, նկարագրելով ամենայն պարագայքը : Տասն և վեց օրից յետը ստացայ Սարգարէն մին զուրան, որոյ վերայ կնքած էր և երդուած, չգրծել խոստամանցը, այսինքն օգնել Մամադ խանին և թոյլ չտալ այնուհետեւ ինչ և իցէ հատուցանել անհաւատին, միայն թէ Մամադ խանը պատանդներ և պարզեւներ Շահի համար ուղարկէ—իսկ Երեւանից զօրք առաքելոյ համար, հարկաւոր չէ, գրած էր, որովհետեւ ես պէտք է էս տեղաց դորա համար զօրք զրկեմ, որ Հերակլի հետը պատերազմեն : Հաղիւ քսան երկու օրումը կարողացայ համոզել Մամադ խանին ընդունել Սարգարի առաջարկութիւնները :

Էնքան կացայ Երեւան, մինչև պարզեւները պատանդների հետը և հնազանդութեան գիրը հասան թարվէզ և էն տեղաց երկու հազար զինուորականք եկին հասին Երեւան : Էս քանի մի ամիսն Երեւանու չորս կողմը զքօսալի տեղրանքումը զբողեցնում էր ինձ Մամադ խանը : Լրտեսները համբաւ էին բերում, թէ Հերակլը պատրաստվում է գալ Երեւանու վերայ, թէ և լաւ գիտէինք, ձմեռն մօտ էր, ճանապարհների վատութիւնիցը չէր կարող գալ այսու ամենայնիւ պարտաւոր էի սպասել գարնան, մանաւանդ որ Հերակլը իւր գրութեանց մէջն որ Մամադ խանի վերայ էր գրում, յայտնում էր թէ ինձ յայտնէ չգնամ թիֆլիզ, որ չի պէտք է ընդունէ : Ես ևս երկու անգամ գիր գրեցի, պատասխանը ոչ միայն չտուէց, այլև ուղարկած մարդկանց վերայ սպառնացել էր, որպէս թէ կսպանել տար թէ որ գիր բերած չլինէին : Էս լուրերն ես Սարդարին հաղորդելով նա էլ զրած էր, թէ ինքն էլ պատրաստ վում է գալ մեծ բանակով գնալ վրաստանի վերայ : Էս լուրերը Հերակլին ծաղրածութեան տեղ էին դալիս, որպէս ես

կողմերը կպատմէին : Յանկարծ աշնան վերջերումը հրամանս ստացայ յանձնել պաշտօնս զօրաց հրամանատուին, և զնազ շուտով թարվէզ, խորհուրդ անել Սարգարի հետը էս երևելի ճանապարհորդութեանը վերայ :

Որդի որդի մտացայ ասել—լռեց միայնակեացը հարուստ ժամանակ և յետոյ վեր առաւ—չէ, չէ, չէի մտացած, այլ խղճմտանքս էր, որ ստիպում էր ամաչելուցս լռել, անցկենալ չպատմել քեզ, բայց ըստ որում ամենայն մեղքս իմ բերանօքս մինչև էս տեղ խոստովանվեցայ, որնոր էս քառասուն տարուան մէջը ոչ որի չէի յայանած, լաւ է, որ էս էլ ասեմ, որպէս զի ոչինչ չմնայ սրտումս : Երբ, որպէս ասեցի Երևանու խանը ինձ էս էն կողմն էր ման ածում որսորդութեան և ժամանակ անցկացնելոյ համայ, և, կամենալով ինձ աւելի ծառայութիւն ցոյց տալ, ինձ հետ իւր պարզ յարակցութիւնը յայտնել կամ թէ և ևս պարզ ասած, շահել, ասեց գնանք Եջմիածին Հայոց աթոռն (օճախն) լաւ տեսնելոյ եկեղեցի է և կաթուղիկոսը շատ լաւ մարդ է, ի հարկ է Սարգարին նա ևս մեծ պարգևներ, և հաղուագիւտ բաներ ընծայ կղբէ : Ես սկիզբն փոքր ինչ նազ արի, սիրտս չէր գալիս գնալ էն աթոռն, որ իմ պապերի սուրբ տեղն էր, որոյ վնասին պէտք էի պատճառ լինէի : Մամադ խանի քանի մի անգամ ստիպմանցն ի վերջոյ համաձայնվեցայ, վասն որոյ և խանը մարդ ուղարկէց, իմացումն տուաւ կաթուղիկոսին, որ և նըշանակած էր օրն և ժամն :

Մին շաբաթի օր, կէս օրից յետը դուրս եկինք Երևանու մեծ բաղնութեամբ և հինգ Երևանի Հայոց երևելի Մէլիքները հետերնիս էին : Ճանապարհումը աշխատեցի, Հայերիցը մինին գոնէ միայնակ գտնէի, հետը հայերէն խօսայի, ցոյց տայի թէ և ես Հայ եմ սրտով և Հայի որդի—բայց չելաւ. չկարողացայ էս պատեհ ժամն գտնել—Մամադ խանը մինչև Եջմիածին, կանգնաջափ չհեռացաւ ինձանէ : Քանի քանի անգամ գիւղէր և վանքէր պատահելիս Հայերիցը մինին յառաջ էի կանչում. հարցնում այս ի՞նչ տեղ է, այն ի՞նչ վանք է, ի՞նչ իրաւունք ունի կաթուղիկոսն իւր աղբի վերայ, ի՞նչ տակ է, վարդապետ, եպիսկոպոս, երբ է շինած Եջմիածինը, ի՞նչ-

պէս են ընտրում կաթուղիկոս, ո՞վ է այժմեան կաթուղիկոսն
և ինչ է նրա անունը, քանի՜ միաբանք կան, որքան զիւղեր
կամ հոգ ունի և այլն և այլն : Միրա լեքն էր, զողջողում
էր, թէ երբ և ինչ կերպով յայանեմ իմ ո՞վ լինելա : Չէ . .
. . . չէլաւ էլի, չհարողացայ սրտիս խորհուրդն կատարել :

Այս ժամաչափ ճանապարհ Աթուրին մնացած, տասնաւ
չափ վարդապետք եկած էին մեզ ընդ յառաջ և սպասում
էին մին վանքի գաւթի մէջը, ուստից երբ մեզ տեսին, դուրս
եկին զգետաւորված, մեր դալուստն շնորհաւորելոյ, ընկան
մեր առաջն մինչև Էջմիածնայ պարսպի դուռն, ուր մին սպի-
տակամորուս եպիսկոպոս, որ փոխանորդ էր կաթուղիկոսի, իւր
միաբաններովը խաչով, խաչվառով սպասում էին մեզ : Հէնց
հասանք սոցա մօտն սկսեցին երգել, և կաթուղիկոսի փոխա-
նորդը կամ տեղապահը մօտեցաւ ինձ և Մամադ խանին ու
թուրքերէն շնորհաւորեց մեր գայն և հրաւիրեց պարսպիցը
ներս դնալ : Էս տեղ ես չհարողացայ հանդուժել, սկսայ ար-
տասուել : Մամադ խանը վարմանալով հարցրեց պատճառը :
Ես, պատասխանեցի, նայելով էս այնչարդ ծերունոյ հասա-
կին, միտքս եկաւ թէ արդե՞ք և ես պէտք է էս հասակին
հանեմ, և կամ թէ էս ալեղարդ ծերունին ինչ է մտածում
աշխարհքիս անցողական փառաց համար, որնոր փորձած
տեսած է . . . էսպէս թէ և կցկտուր խօսքերով կարկա-
տեցի լաց ըլնելուս պատճառը, բայց . . . բայց և ես հաս-
կանում էի որ չհարողացայ հաւատացնել, համոզել նրան : Հա-
յոց հոգևորականները մէջէրնուն խօսում էին իմ լաց ըլնե-
լու վերայ, որնոր և ես փոքր ի շատէ լսում էի, հասկանում
էի : Էսքանն է մօխս, որ մին ծերունի վարդապետ ասում էր,
սորա լաց ըլնելը Հոգւոյն Սրբոյ շնորհքն է, որ մեզ սա խրդ-
ճայ և ողորմայ : . . . Լաւ նշան է անորինի տեսնելն էս-
պէս քրիստոնէական փառաւոր հանդէսն և արտասուելը :

Մինեզ փողոցի միջոքն անցանք, մտանք մին փոքր դուռն
և դուրս գնացինք Էջմիածնի գաւթի : Այր ելանք կաթու-
ղիկոսի պալատը կամ որպէս նրանք անուանում էին, վեհա-
բանը, ուր ծերունի կաթուղիկոսը բազմած էր դահի վերայ :
Այս ժամ կաթուղիկոսի մօտը նստեցանք, շատ ջնջին աւար-

կաների վերայ խօսեցինք, որոնք միաքս չէ, և յետոյ գնացի ես
 ինձ համար պատրաստուած փառաւոր սենեակը : Մամազ խա-
 նը մնաց կաթուղիկսոսի մօտը : Կարող եմ ասել մերձ հազա-
 րաւոր ձիաւորք կային մեզ հետ : Աթուղներս մանելու ժա-
 մանակը, աղմուկը տեղի տուաւ մեռեալ լուծեան, որպէս թէ
 ոչ ոք չէ մտած էս աթուղն, ոչ ուտելաց, ոչ տեղի և ոչ
 ձիանց կերակրոց համար, ինչպէս ուրիշ տեղաւոր տեսած էի :
 Էս տեղ այնուհետեւ ձայն, աղմուկ դուրս չեկաւ : Էնպէս բա-
 րեկարգած էր Էջմիածնայ Աթուղը : Ես մնացի միայնակ ժա-
 մաչափ : Մին էլ ներս բերին երկու խօնչայ, դրին առաջևս
 ու վրի ծածկոյն վեր առին : Նայեցայ խօնչէքանց մէջին մին
 մեծ, մին փոքր ժամացոյցք, երեսուն գաղ (ինչպէս որ յետոյ
 չափեցինք տեսանք) գիրայ, քսան գաղ մահուդ քանի մի գոյն,
 երկու մեծ և փոքր հայիլիք, տասնաչափ դանակներ կերպ կերպ,
 տասնութը գլուխ շաքար, երկու չիտր խահլի : Բերող վար-
 գապեան յտակ պարսկերէն վեր առաւ, Խան, կաթ ուղիկոսը
 (Խալիֆէ թուխալիֆէն) ուղարկեց ձեզ համար էստունք
 առամի վարձ (դիշ քիրասի) : Առամի վաճ, ի՞նչ ասել է վար-
 գապետ, հարցրի զարմանալով : Մեր Աթուղի սովորութիւնն է
 — պատասխանեց վարգապետը — ամենայն մեծամեծաց, հաս-
 նելիս մեր (օջաղն) վանքն, նրան առամի վարձ անուամբ ըն-
 ծայ քաշել : Ես լռեցի, բոպէաչափ, և ապա վերառայ, ի՞նչ տեղ
 ես սովորած պարսկերէն լեզուն : Նա պատասխանեց, ես ծը-
 նած եմ Ասպահանու Զուղուժը : Ա՞՞մ որդին ես, հարցրի : Նա
 պատասխանեց, այս ինչ այն ինչ մարդոց թուոն և որդին եմ :
 Ճանաչս եկաւ երբ պապի և հօր անունը լսայ, վասն որոց
 վերառի, ունի՞ս ազգական Շիրազ էդ անունով : Այո՛, պա-
 տասխանեց վարգապետն, այս ինչ այն ինչ մարդիկ եղբարքս
 են, որք Ասպահանու գնացել են Շիրազ վաճառականութեան
 համար և պահուած են տեղ մնացած են : Ես սկսեցի նորա
 եղբարց, որդւոց և աղջիկների, կանանց, քուերց, ազգականների
 անունները մի բառ միջէ ասել, ուր տեղ տուններնին է, և ինչ-
 պէս աներ ունին : Վարգապետը զարմանալով նայեց երեսիս
 ու հարցրեց, Խան, ի՞նչ տեղաց է յայտնի քեզ էդ անունները :
 Պատասխանեցի, ես Ալլահվէրդի խանի որդին եմ, որ Շիրազու

Հայերի գլխաւորն էր : Ուրեմն, ասաց վարդապետը, Գեորգի խա-
նի թռռն էք, Նազուր խանն էք . . . ինձ չէ՞ք ճանաչում :
Էս ասէց ու սկսէց հայերէն լեզուաւ իւրեան ծանօթացնելը :
Էս կողմը էն կողմը նայելով որպէս զի ոչ ոք Պարսիկ չլինի
էն տեղ ներկայ—ես քանի մի ամիս, ասաց, տիրացու ժամա-
նակս քեզ հայերէն դաս եմ տուած, անուես էր տիրացու կա-
րապետ, այժմ վարդապետ և այլն և այլն : Ի հարկ է նրան
տեսած էի առանց մտրուսի և հիմի, որ լաւ նայեցայ, ճանա-
չեցի, ուզում էի վեր կենալ ձեռքն համբուրել և ահա էս
միջոցին Մամադ խանը ներս եկաւ, խօսքերն իս ընդ միջեցինք
և կարապետ վարդապետը վերկացաւ կանգնէց, գլուխ տուաւ
դուրս եկաւ, իմ շնորհակալութիւնս տանէ մատուցանէ կա-
թուղեկոսին :

Ուզեցի տեղեկանալ Մամադ խանէն, ինչ ասել է առամի
վարձ ասած բանը : Սա սկսէց երկարօրէն պատմել ինձ, թէ
երբ ես կամ որդիքս կամ եղբարքս, էս տեղ դանք, ինչպէս
հին ժամանակէ ի վեր մնացած է էս սովորութիւնը, կառնենք
իւրաքանչիւր ծառայի համար հինգ հինգ հազար դեան,
երիվարաց երկու և ջորեաց մին մին հազար դեան : Եւ ինձ
կամ եղբարքս համար կը խօսենք զին կկարենք, երբեմն շատ
երբեմն քիչ, ժամանակը գիտէ զորօրինակ, եթէ նոցա զատիկն
է, ի հարկ է շատ կը լինի, թէ էնպէս ժամանակ է մին երևելի
որ չէ, մին կերպով շատով քիչով անց կը կենանք, մեր մէջը կը
համաձայնովինք, և հիմի շատ խօսեցի զինը վերջացրի, էնպէս որ
ձեր ծառայիցն շինել տուի մին մին թուաման, երիվարաց չորս
և ջորեացն երկու երկու հազար դեան : Ես զարմացած մնայի
Մամադ խանի խօսքերի վերայ, մտածում էի մի՞թէ Եջմիա-
ծինը զանձարան ունի որ ինքնաբոյս է, կամ աղբիւր կայ էն
տեղ որ ոսկի կամ արծաթ է բղխում : Շատ կը պատահի,
հարցրի, քոյ և եղբարքդ կամ որդւոյդ Եջմիածին գալը :

Տարին, պատասխանէց Մամադ խանը, մին երկու անգամ
իմ գալը կպատահի, և մին անգամ ազգականացս, էն էլ Հա-
յերի զատիկն : Նոցա կըրկեմ իմ կողմիցը որ Հայերի զատիկը
շնորհաւորեն :

Եւ չուզեցի հետաքրքիր հարցմունքներ աւելացնել, վա-

խենալով թէ յանկարծ բարկանամ ու հակառակ խօսիմ, փոխանակ բան շինելոյ, աւերեմ, վասն որոյ լռեցի և հրամայեցի ընթրիք տան :

Առաւօտեան ալեզարդ կաթուղիկօսը քսանաչափ եպիսկոպոսօք եկաւ ինձ տեսութիւն : Ես ուզեցի նորս գալիս տեղեցս վերկենալ և մտքումս զրաժ էի աջն էլ համբուրեմ : Մամադ խանը թոյլ չտուէց վերկենալս, ասելով ամօթ է քեզ մին Հայի համար վերկենալ : Ես ևս յիմարութեամբ նորս խօսքին ականջ զրի, բայց յետոյ շատ փոշեմանեցայ :

Կաթուղիկօսը հրաւիրեց մեզ գնալ տաճարը պատարագի ժամանակը : Ես թոյլ չտուի Մամադ խանին խօսել իսկ և իսկ որպէս զի նա չբաց ասէ, վասն որոյ համաձայնուեցայ և հարցրի, երբ էք նշանակում գանք տաճարը : Պատասխանեց կաթուղիկօսն, մին ժամից յետոյ, երբ իմ համաձայնութիւնը լսաւ փոքր ինչ խօսելուց յետը կաթուղիկօսը, շատ ուրախութեամբ վերկացաւ դուրս գնաց, ես էլ օտի վերայ կանգնեցայ ու մինչև դուռը գնացի ուղղւորել : Նշմարեցի, որ էս շատ ընդգէմէր Մամադ խանին :

Ժամաչափ սպասելով զանգակները խփուեցան, լուսամուտիցը նայում էի. ինչպէս կաթուղիկօսն իւր փառաւոր հոգևորականաց հանդէսովը մտաւ տաճարն, ուստի նոյն Կարապետ վարդապետը վերադարցաւ եկաւ մեզ հրաւիրելոյ, Մեք ևս շատ բազմութեամբ գնացինք մտանք տաճարը : Ես, որդի, չեմ կարող հիմի, էն սրտի զգացմունքն, որ էն օրը զգում էի, հիմի, հիմիկուան էս լեզուովս քեզ պատմեմ : Էս քանն ասումեմ, որ շատ հետաքրքիր էի նայում էս—էն կողմը, էն հին տաճարին եմ ասոււմ, որոյ ժամանակից հնացած և մաշուած կամարների տակին, երկու հարիւրից աւելի հոգևորականները զարդարուած, զգեստաւորված, ումանք թաղէրով, ումանք թանկագին շուրջառնէրով, կամ գաւազան, կամ բուրվառ ձեռքէրումը կարգ կարգ կանգնած, միմեանց հետ քաղցր և ներդաշնակ աղերսախառն ձենով երգում էին, էն աղօթքները որոնք երեխայութեանս ժամանակը լսած էի : Մտքէս անց էր կենում էն հոյակապ տաճարի մէջը ի շինութենէ անտի քանի քանի քրիստոնեայ և անքրիստոնեայ, բարի և անբարի :

Թագաւորներ, իշխաններ կանգնած աղօթած են, քանի՛ քանի՞ այլակրօն տիրապետողներ մտած են զրսիցը աչքերով նայած, քննած դուրս եկած : Ո՞ւր էին նրանք—նոցա ստուերն անգամ չէին երևում : Ե՞ս, հաւատուբայ ո՞մն, նրանց կանգնած տեղումը հիմի կանգնած, փքվում ուռչում եմ, ինչի՞, ըստ որում ունայն է աշխարհս և նրա փառքն ոչինչ :

Մինչև սուրբ սուրբ ասելն ես մտօք ցնորվածի նման էի, էն սուրբ խորհուրդի ժամանակն ամէն ուշքս ու միտքս գլուխս գալով : Չերմեանդ սրտով մեղայ գոչելով մտքումս, սկսեցի աղօթելն : Էն քան անզգայ էի, որ չէի իմանում ո՞ւր եմ և ո՞վքեր կան մօտս, մին էլ այն զգացի, որ երեսիցս տաք տաք արտասուքը կաթիլ կաթիլ թափուեցան մարուսիս վերայ : Թէև զլուխս խոնարհացրի որպէս զի ուրիշները չնշմարեն, բայց չեղաւ, աչքիս պոչովը տեսնում էի, որ մօտիս կանգնածները նշմարեցին ու լաւ տեսան : Ես ինձ չհոտրելոյ համար երկար միջոց աղլուխս չհանեցի արտասուքս սրբելոյ համար, բայց տեսայ չէ լինում, հանեցի աղլուխս որպէս թէ քիթս եմ սրբում, մին կերպով աչքերիս արտասուքն էլ սրբեցի ու քարացած կանգնեցոյ մինչև պատարազը վերջացաւ, յառաջ գընայի մօտեցայ Աւետարանը համբուրեցի դուրս եկոյ ժամացը, ինձ ևս հետեւեց Մամադ խանը : Ես տեղ իմ մահն ու կեանքը, բախտաւորութիւնն ու տարաբախտութիւնը վճռածի նման եղաւ, ըստ որում Մամադ խանը կամ միւսները արդէն իմացան կամ քրիստոնեայ եմ, կամ թէ համոզուեցայ քրիստոնէանալ :

Այնուհետև շատ փոքր կնստէինք սենեակումը, բացի հացի ժամանակը, մնացեալ ժամերնիս Աթուռի ամենայն երևելի տեղրանքն էինք գնում տեսնելոյ, տնադելոյ : Ինձ շատ զարմանալի թուեց տպարանը, որայ մասին շատ լսած էի, բայց չէի տեսած, և սեղանատունը, ուր երկու հարիւր հօգիէն աւելի կճաշէին : Հացատունը, ուստից վեց հարիւր մարդից աւելի հաց կուտէին և այլն և այլն :

Մամադ խանը երևի կասկած էր առած ինձանէ, որ էլ չէր հեռանում մօտիցս և ես աշխատում էի, որպէս զի մին Հայ առանձին կարողանայի դանեւ ու սրախ խորհուրդը ա-

պտպարել կաթ ուղիկոսին, բայց անկարելի եղաւ : Երբ սեղանն առուներ նայելոյ էինք զնոցել, կարապետ վարդապետին այսօր քան կարողացայ քանի մի բառով ասել թէ, էս տեղ չկարողացայ քեզ տեսնել, Երեւան կապասեմ, շուտով դաս :

Յանկանում էի շատ մնալ Աթոռումն և սրտիս փափագն կատարել, բայց նայելով էն քան բազմութեան ծախքին, որ իմ պատճառաւ էր վնաս դիպչում Աթոռին, վասն որոյ չորրորդ օրը, այսինքն երեքշաբթի օրը վերադարձանք զնայինք Երեւան : Ես բանից անտեղեակ, մի՛ ասել Մամազ խանը իւր մարդոյ բերանով խօսեցած է լինում կաթ ուղիկոսի հետը, որ ինձ հարիւր և Վուլէյման խանի համար հինգ հարիւր թուման պատրաստի դրամ և էն քան էլ հազուադիւր բանէր ընծայ պէտք է տայ : Կաթ ուղիկոսը զանազան պատճառներ բերելով, չէր ուզեցել տալը : Մեր դուրս գալոյ ժամանակը կաթ ուղիկոսը մինչև պարսպի դուռն եկաւ ճանապարհ ձգելոյ և տաննաչափ սպիտակամօրուս վարդապետներ մինչև կէս ճանապարհը : Նոցանէ հեռանալես, իմ շնորհակալութիւնըս որպէս կաթ ուղիկոսին, նոյնպէս և վարդապետացը շուտ շուտ յայտնելես, ողորմելիքը կրկնում էին, ներէ՛ աւել պակասն, սևերես ենք քեզ մօտ, Աստուծով ժամանակաւ քեզ ծառայութիւն կանենք, և այլ էսպիտի խօսքեր : Ես չէի հասկանում նոցա ասութիւններն և նպատակները :

Երեւան երկրորդ օրը, կարապետ վարդապետը երկու ուրիշ ձերուռնի եպիսկոպոսօք, որոց մինի անունը Մինաս էր, եկին ինձ տեսութիւն մեծամեծ ընծայներով և կաթ ուղիկոսի գրովը թէ Սարգարի համար և նորան արժանի, հազիւ կարողացանք էս ընծայները պատրաստել կարճ միջոցումն և այլն : Ընծայները թէ պատրաստի դրամը և թէ միւս բաները մերձ հազար թումանի կլինէր : Ես զարմացայ, թէ էս ինչ ընծայներ են, մի՞թէ, ասացի եպիսկոպոսոց, ձեր արտերն ոսկին բերում կամ ջւերնիդ արծաթ են դառնում : Եպիսկոպոսները պատմեցին ինձ Մամազ խանի ստիպելն էս ընծայների համար, և թէ էն տեղ Աթոռումն և ճանապարհին ևս ասած էր խանը վանականաց թէ իբր դու խռոված ես գնում կաթ ուղիկոսէն, և թէ Թարվէզ զրեւոյ ես Սարգարին քեզ ար-

ժանի քոյ պատուին չընդունեցին Աթոռումն և այլն և այլն :
 Ես շատ երդմամբ հաւատացրի, որ երբէք էջ մասին մը-
 տածած ևս չեմ նախ, երկրորդ հրամայեցի, իսկ և իսկ ինձ
 տուած Աթոռումն ընծայները բերին ու վերագարձեն նոցա :
 Յայտնեցի նոցա ծածկաբար քրիստոնեայ լինելս, և Հայաս-
 տանեայց եկեղեցւոյ աւագանի որդի : Նշանակեցի կարապետ
 վարդապետը քանի մի գիշեր գայ իմ սենեակումս ժամերգու-
 թիւն կատարէ, և կիւրակի օրն խոստովանուեցայ և հաղորդ-
 վեցայ նրա ձեռամբը : Կարող է ամենայն ոք լաւ հասկանալ
 թէ եպիսկոպոսաց և կաթողիկոսին ինչ ուրախութիւն էր
 ինձպէս մին անառակ որդին վերագարձնել եկեղեցւոյ ծոցը :
 Մինաս եպիսկոպոսը, որ նոցանէ աւելի ծեր և խելացիին էր,
 առաջին անգամը լսելիս իմ բերանէն քրիստոնեայ գոլս, ու-
 րախութիւնից սկսաւ լալը ու դառն արատուելն : Սա շատ
 խնդրէց ինձ, այնպէս անել որ իմ գնալուց յետը Մամադ խա-
 նը չնեղացնէ Աթոռին : Սա էնպէս ազդու կերպով իւրեանց
 նեղութիւնները նկարագրէց ինձ, որ ես ևս արատուեցայ :
 Սրան յանձնեցի Եջմիածնումը տուած, ինձ և Սարգարի հա-
 մար հիմիկուան բերած ընծայները ասնէ յանձնէ կաթու-
 ղիկոսին, իսկ միւս երկուսին քսան օր պահեցի Երևան, եր-
 բեմն ես նոցա և երբեմն նոքա ինձ մօտ կլինէին, մինչև որ
 Սարգարիցը կաթողիկոսի համար խիլայ և հրամանագիր բե-
 թել տուի, որպէս զի ոչ ոք չհամարձակէ այնուհետև Հայոց
 Աթոռին նեղութիւն տայ, և եթէ պատահի մին էնպէս բան,
 կաթողիկոսը հաղորդէ ուղիւ Սարգարին :

Լսում էի, որ Մամադ խանը շատ սարջացած էր ինձ Եջ-
 միածնայ պարսպի մէջը կոխելը, ըստ որում մինչև էն ժամա-
 նակը կարծում էր, ոչ թէ կարծում էր, այլ հաւաստի էր նրան
 որ Եջմիածինը իւր գանձարանն է, բայց այնուհետև ինձ նը-
 ման պահպանողեցը, շատ երկիւղ էր կրում : Մինչ այս մինչ
 այն, որպէս վերն ասեցի, Սարգարիցը հրաման ստացայ գնալ
 Քարվէլ : Երևանու դուրս գալուցս, երկու օր յառաջ, որ կի-
 րակի էր, առաւօտեան լոյսը չծագած գնացի Եջմիածին, հա-
 սայ պատարադին : Պատարագից յետը գնացի կաթողիկոսի
 աջն համբուրելոյ և հրաժարական օրհնութիւնը ժառան-

գելոյ : Էն ժամանակը խորհուրդ տուի չորս հինգ հարիւր թուամանի հազուադիւտ բաներ մին եպիսկոպոսի ձեռամբ ուղարկէ թարվէզ Սարգարին ընծայ ինձ հետ կամ քանի մի օր իմ դուրս գալուց յետը : Աղօրմելի ձերունին ընդունէց առաջարկութիւնս ուրախութիւնով և շնորհակալութիւնով :

Երբ հասայ թարվէզ, Էնպիսի երևելի ծառայութիւններն համար Սարգարը շատ պատուով ընդունեց ինձ և մեծ շնորհ էր ցոյց տալիս : Կաթուղիկոսի ուղարկած եպիսկոպոսը աշխատեցի շուտով վերադարձնել խիլայով և լաւ հրամանագրերով Եջմիածնայ անշարժ կարուածոց համար :

Օր ըստ օրէ յառաջադէմ էի լինում Սարգարի մօտը և երևելի գործեր ինձ էր յանձնում : Իմ ձեռամբ էին կատարվում իմ միջնորդութեամբ հնազանդված քաղաքներին վերաբերեալ գործքերը, որպէս թէ նոցա վերայ իշխողը ես էի : Մինչ իմ վերադառնալը Ջաֆար Առլի խանը, Խոյեցի, Հիւսէյն խանի որդին, որպէս ինձ մերձ ծանօթ և երախտապարտ, առաջինը տիրապետողաց մէջը, թէպէտ եկած էր ուղիղ, մինչ ես երևան էի, և իջած Սարգարի տանը, որպէս թէ իւր դուռը հաւատացել էր Սարգարին, վասն որոյ և Սարգարն նորա հը պատակութեան և բարի օրինակ լինելոյ, մանաւանդ նորա տուած բարի խորհրդոց համար շատ էր սիրում, վասն որոյ Ազայ Մամադ խանէն նորա համար շնորհաց հրամանագիրէր բերել տուել, այսու ամենայնիւ զգում էր, որ ինձ պարտական էր էն ամէն իւր պատուի և յառաջադիմութեան համար : Յանկանալով ապացուցանել իւրեան երախտապարտութիւնը, միջնորդ եղաւ ինձ համար գանձապետութեան աստիճան առաւ Սարգարէն : Ատրպատականի բախտը, վիճակն էս երեքիս ձեռքումն էր, այսինքն Սարգարի, Ջաֆար Առլի խանի և իմ : Երբ ես տանիցս դուրս կը գայի, հազարաւոր մարդիկ առաջևս և յետնէս կընկնէին : Մտքումս բարեբախտութեան ծայրն էի հասած :

Էս միջոցումը, մինչ Սարգարը պատրաստվում էր Արաստանու վերայ գնալ, Ազայ Մամադ խանէն հրամանագիր եկաւ չղնալ սպասել մինչև իւրեան գալը, որովհետև ինքն մըտապիր է ծանր զօրքով դալ գնալ վրէժխնդիր լինել : Էս տա-

ըի և մեր ուշանալն իմ՝ երեւոյալութեամբը, փառաց հանդէս բաց արեց ինձ համար, այսինքն:

Ահմադ խան Մարաղու տիրապետողը, որ Ատրպատականի թերևս էն ժամանակը, բոլոր Պարսկաստանի առաջին հարուստ և երեւելի անձն էր, հետո ծանօթացաւ, տեսնելով որ ձեռքուս իշխանութիւն կայ և շատ գործում կարող եմ հարկաւոր լինել իրան, առաջարկեց ինձ փեսայանալ: Ոչ ինչ զրգուարութիւն, ոչ ինչ խղճահարութիւն չկարողացան արդելառիթ լինել ինձ նրա առաջարկութիւնը ընդունելոյ համար: Կենացս խոփոխութիւնը, ներկայացրեց ինձ դարձեալ այլ իմն երջանիկ դար: Քանի մի ամիս յառաջ զլիւէս անցած էջմիածնու և Երևանու ներգործութիւնները, մոռացայ իսպառ: Քառասուն օր, քառասուն գիշեր հանդէսով հարսանեացս ուրախութեանց յետոյ, խոստովանվեցայ ամենից փէսայ, ոճմը, էն էլ Ահմադ խանինման մարդոյ, որ էն օրերումը բոլոր Պարսկաստանի մէջը ամէնից հարուստն էր և զօրեղը: Մարդրի քաղաքականութեանը շատ յարմար էր իւր ստորադրելոց խնամենանալը էնպիսի երեւելի տիրապետոյի հետը: Նախնեաց առածը կարողացայ նպացուցանել թէ, էնպէս թուրքացի ես որ հօրդ խաչը էլ չես ծանաչում: Մինչև էն ժամանակը, ծածկարար գինի կիսմէի, երբեմն երբեմն քրիստոնէութեան վերայ կմտածէի, Հայերի հետը ծածկարար հազորդակցութիւն կանէի, բայց . . . բայց այնուհետև էնպէս կոշտ և կրօնաշատ եղայ, որ նրանք էն աստիճան ատելի եղան ինձ, որ քրիստոնէի անունն անգամ լսելս զզուելի էր ինձ, և որպէս թէ նրանց ընդդէմ մին աներևոյթ ատելութիւն էր զոյացել սրբատուս: Էն օրերը բոլոր Պարսկաստանումը միմիայն Մարաղէն էր Հայոց համար ապաստարան և ասպնջահան, Ահմադ խանի հարստութեան աղաղաւ, որ շատ սիրելով իւր օգտի համար էն աշխատասէր ժողովուրդը, հաւաքել էր իւր հովանաւ որութեան տակը: Արդուում, Ղարս, Բայազիդ, Վան և Խոյ Հայ վաճառականներ ունէր նստացրած, ամէնքին էլ առանձին առանձին մեծ գումարներ էր յանձնած, առևտուր անեն, որ և մեծ օգուտներ էին բերում: Հիմի եթէ նա իւր հարստութիւնը մահմեդականաց ձեռքը ձգէր, անշուշտ ոչ միայն ա-

պարզիւն կմնար, այլև տուածը չէր կարող վերատանալ: Ես նորա արարմունքին չհանդուրժելով, սկսեցի խորհուրդ տալ ինչ հնարք կարող էր, գործածել, աշխատել Հայերին գոնէ թուրքացնէ: Ահա որդի, լսէ. ասեց միայնակեացը. . . . լսէ՛ . . . տես ես ի՞նչպէս բարի մահամեղական էի եղած, և ո՞ր քան էի ցանկանում այն օրէնքի տարածումը:

Չէ՛, չեմ մոռանալ, քաւ լեցի՛ թէ մոռանամ: Երբ շատ անգամ կրկնեցի . . . ստիպեցի աներոջս հետևիլ խորհրդիս — Հայերին մահամեղականութիւնն ընդունել տալոյ համար — մին օր ոչ դէս, ոչ դէն, յանկարծ պատասխանեց, փեսայ, փեսայ. . . . ծնողացդ կամ սանտուիդ արիւնը կամ կաթը պէտք է եղած լինի Հայի արիւն կամ կաթը, էդ քոյ ստիպելդ, ինձ կասկածանաց մէջ է ձգում, ապա թէ ոչ, քեզ ի՞նչ հարկաւորութիւն նոցա կրօնին և հաւատին. երբ ինձ, քեզ, կամ այլոց, որպէս փորձուած և տեսնուած է, մեր ազգակիցներէն, հաւատակիցներէն, աւելի հաւատարիմ են ծառայութեան և առևտրի մէջը: Էս կարձ պատասխանը, ինձ ստիպեց լռելոյ և մի՛ այնուհետև Հայերին վերաբերեալ մին խօսք ասել նրան, ըստ որում տեսայ նորս խօսքը շատ ձշմարիտ էր:

Էս ազդու և հակիրճ պատասխանից յետոյ սկսեց խրդձմրտանքս կրկին անհանգստանալ, կրկին աներևութաբար հակիլ քրիստոնէութեան կողմն, ամենայն ժամ ամենայն բովայն մտքիցս անց էր կենում մին հնարքով ձեռք բերեմ քրիստոնէութիւնը: Ասումեմ անամօթաբար մին հնարքով. . . . ի՞նչ հնարք էր հարկաւոր ինձ, մի՞թէ չէի կարող առաջվան նման ներքուստ քրիստոնէայ լինիլ: մի՞թէ չէի կարող Հայերին հակառակ չլսօսել և ճներգործել, մի՞թէ չէի կարող տարին մին անգամ Թարվիզու նման տեղումը, ուր շատ Հայք կային տուես ծածկաբար քահանայ բերել տայի և խօստովանվէի, հաղորդվէի: Զարմանք է, երբ էս աստիճանի հոգիս զգում էր միշտ հակառակ կողմն էի ինձ ապաստան շինում: Հիմի երևակայում էի, կնոջս էնքան խանդակաթ սիրումեմ, և արդէն յղի է, սպասումեմ ժառանգ տեսնել, աներս ալիզարդ եօթանասուն տարեկան մարդ, շուտով կմեռնի և ես մեծ կարողութեան տէր կլինիմ: Աուլէյման խան Սարդարի զանձա-

պիան եմ, և բոլոր Ատրպատականը առաջիս խոնարհում է, ընդհակառակն ուր դնամ քրիստոնէութիւնս շարունակեմ, երբ վերոյիշեալնէրի ոչ մինը չեմ կարող ձեռք բերել: Տես, որդի, մին մարդ, ինչ կերպ մարդկանց ընկերակցութեամբ իւր կենաց մեծ մասն անց է կացնում, կամ պարզն ասած, ինչ մարդկանց հետը նստում է ու վեր է կենում, ի՞նչպէս է նրբանցից իւրեան բարոյականութիւնը ստանում: Իմ կարծիքը էն է, որ շատը վատ մարդկանց հետ ընկնելով, իւրեանց ապագայ կեանքն ապերժանիկ են անում, թէև աշխարհից փառաց և պատուոյ ծէրն ևս են հասնում:

Էս տեղ միայնակեացը դու խը քաշ ձգէց և տասն բուպչափ լուռ մնաց, և յետոյ վերառաւ, էհ որդեակ շատ խօսելէս, գլուխս սկսէց ցաւիլն. երկար խօսելը չէ էն քան ինձ զգալի, որքան անցեալ կենացս վատ յիշատակներն կրկին միտ բերելս, ինձ սրտամաշուկ է անում: Բաւական է . . . բաւական, որքան պատմեցի, ներէ՛ ինձ . . . Տէր ընդ քեզ:

Արդարև ես ևս նշմարեցի որ ողորմելի ծերունւոյ ճեպ ճերմակ և կարմրաժեւ երեսը, սրտի նեղութենէն մեծ փոփոխութիւն էր ստացել, և վառվառ վառվում էր, աչքէրն էլ կրակի նման շուռմուռ գալով պլպլում էր և բոլոր անձը դողդողում էր, վասն որոյ ես ևս կանգնեցայ, կիսաբերան մը նաս բարև ասելով, չգիտեմ ինչն, արտում տխուր հեռացայ նրանէ, շարունակեցի զառ ի վայր ճանապարհս դէպի վանքը: Վանականք ևս նշմարեցին իմ կերպարանքի վերայ տխրութիւն, որոյ պատճառն և ինձ անհասկանալի էր նոցա ասեցի, վասն որոյ ամենայն օրուան նման էլ նրանք չհարցրին պատմեմ նոցա միայնակեացի ասածնէրը:

Օրոտոտ, 27-ին առաւօտեան ուշ վերկացայ քնիցս, վասն որոյ և խնդրեցի վանահօրը փոքր ինչ կերակրեղէնից, ուտելքից տայ ծառայիս, որ վերառնէ բերէ հետս, գիտէի որ ուշանալուս համար չեմ կարող ճաշուան ժամանակը վերադառնալ, և խեղճ վանականացը ինձ սպասելոյ պատճառ կլինիմ: Հա՛ մտացել եմ յիշել, որ ամէն օր դէպի քարայրը գնալիս կտեսնէի ճանապարհին էս քարափի էն քարափի վերայ ուխտաւորների բերած նոր նոր պաշարներ լօշու մը փաթաթած դրած, և

երկրորդ օրը գնալիս կնայէի առաջուան տեսածներս կամ չէին երևալ կամ թէ ցրուած գեանի վերայ էս տեղ էն տեղ ածած կը լինէին : Ի հարկ է միայնակեացը, որպէս որ երևում էր նրանցով էր կերակրվում, նրանց տասնիցը մէկը չէր կարող տանել ուտել, անշուշտ չորեքկողմի գազաններն և թռչուններն էլ էին նրանցով կերակրվում, Ահա, էս էր պատճառը, որ վանքի միաբանները կարծում էին միայնակեացն առանց կերակրի և հացի է ապրում :

Երբ հասանք քարանցաւի դուռը, ծառայիս ձեռքէն առի ուտելեաց կապոցն ու ներս մտայ միայնակ : Միայնակեացը պարկած էր, ինձ հէնց տեսաւ, վերկացաւ նստէց, նայէց՝ ձեռքիս կապոցին, մինչև իմ ողջոյն տալս, ասէց, էդ ի՞նչ, երևի միւս օրվան պարզէնէրդ ընդունելս, առիթ տուէց քեզ միւս անգամ ընծանէր բերել : Այ, պատասխանեցի, ոչ հայր սուրբ այս իմ նախաձաշիկս է հետս բերի խնդրել քեզ, բարեհաճէք էս օր միասին վայելենք, ինձ գգալե է, որ դու իմ քաղցածութեան համար մտածումես ամենայն օր : Սիրելի, ասէց միայնակեացը, որպէս տեսնում եմ, դու աշխատում ես էդպիսի բաներով ինձ կամաց կամաց և հնարքներով փափկացնել, որպէս զի աշխարհիս զկոնութիւնը ճաշակել տալը սովորցնես : Ես իմ չորաբեկ հացովը բաւական եմ և ուրախ իմ ուխտաւորներն էն քան ուտելիք են բերում, որով ոչ թէ ես, այլև քսան քեզ նմաններն էլ կարող են կերակրուիլ : Քաւ լնցի հայր, ընդմիջեցի նորա խօսքը, Աստուած երկինք, թէ ես էդ դիտաւորութեամբ յաճախում լինիմ քեզ մօտ, որպէս և էն օրն էլ երդուեցայ : Իմ նպատակս ոչ այլ ինչ է, կրկնում եմ, եթէ ոչ քո օրհնութիւնը ժառանգել, և էդ ականատես հնութիւնները, որք կվերաբերին ըստ մեծի մասին մեր քաղցր հայրենեացը—մեր քաղցր հայրենեացն եմ ասում, չթողուլ թաղուած մնան էս քարանցաւի մէջը :

Հայրենիք բառը, նշմարեցի, խոր ներգործեց բարի միայնակեացի սրտումը, վասն որոյ և քանի մի անգամ հայրենիք հայրենիք կրկնելով, ասէց, չեմ մոռացած որդի, չէ, չեմ մոռացած, առաջուան քոյ զրոյցը թէ, մեր հայրենիքն այժմ երջանիկ է . . . երջանիկ է Հայաստան . . . երջանիկ

նրա որդիքը . . . եթէ . . . էն Պարսիկ անիրաւ ատրապետողաց յուզկահարութենէն, զերութենէն պատուած են: Քանի քանի արիւնհեղութիւնք, սովք, զերութիւնք, երկրէ երկիր գաղթականութիւնք, ես . . . ես մեղաւորս պանատես եմ եղած. աշխատեցէ՛ք, աշխատեցէ՛ք ուրեմն ամենայն եղանակաւ: Էդ ձեր ազատութիւնը բարբարոսներէ ձեռքից, ազնիւ երախտագիտութեամբ փոխարինել: Հայր պատասխանեցի հայր, առանց սնապարծութեան կարող է իւրաքանչիւր Հայն հոգարտանալ, որ ոչ մին ազգ, ո՞ր տերութեան որ հնազանդել է, թէ մեծ է եղած և թէ փոքր, էնպիսի ջերմեռանդութեամբ չէ ծառայել նրան ինչպէս Հայն, որ մինչև մոռացել է իւր ազգային պարտաւորութիւնները, որնոր շատ անգամ աւելին յիմարութիւն է համարուել: Ո՞ր ժողովուրդ, ո՞ր ազգ կարողացաւ էն քան անբանց ծառայել, չորս կողմի անթիւ հաւատոյ թշնամեաց հնազանդուելով, ու իւր ազգութիւնը պահպանել էրքան երկար ժամանակ: Ո՞ւր է էն մեծ Ասորեստան, ո՞ւր Մարք, ո՞ւր Հրէաստան, ո՞ւր Եգիպտոս: Ո՞րը նրանցից էս օրվան օրս կարող է հաւասարվել մեր ազգին, մի՞թէ մեր ազգի հաւատարմութիւնը չէր, որով կարողացաւ էս քան ժամանակ դիմանալ և տոկալ էն քան դժուարութեանց:

Ուրախ եմ հոգևով չափ, ուրախ: Ասեց ու լուեց: Լուութիւնը և խռովեալ դիմաց փոփոխումը, ցոյց էին տալիս նրա հոգւոյ և սրտի մորմոքումը:

Հայր, կցեցի, հայր խնդրեմ շարունակել ձեր կիսատ պատմութիւնը, որ զիտէք ո՞րչափ ցանկալի է ինձ մտադրութեամբ լսելն էնդունք:

Մտիս չէ որդեակի, ասեց նա, մտիս լաւ չի գալիս երեկն ուր թողի պատմութիւնը . . . մինչև ո՞ր տեղ շարունակեցի:

Երբ Ահմադ խան Մարաղեցին ասեց կամ ծնողացը կամ սանտուիդ արիւնք կամ կաթը քրիստոնեայ պէտք է լինի, ապա թէ ոչ . . . պատասխանեցի:

Հա՛, վերաբաւ միայնակեացը, հիմի մտիս եկաւ, լաւ մտիս եկաւ, ուրեմն լէ, ինչպէս պատմեցի երեկն, արտաբուստ ոչինչ պակասութիւն չունէի և որպէս թէ երջանկութեան ծէրն էի հասած, բայց խղճմտանքս միշտ մեռած էր և անհանդիստ

Շատ անգամ միայնակ ժամանակս ուզում էի ինձ ու ինձ սը-
նտախ յուսերով մխիթարել սիրտս, զանազան ինձ շահաւէտ
երևակայութիւններով, ուրախացնել և ուրիշներին ևս կեր-
պարանքս, դէմքս, շարժողութիւնս ուրախ ցոյց տալ, բայց .
. . . բայց չէ, չէր լինում: Էս մտատանջութիւնից, մտիս չէ
ինչպէս եղաւ, կրկին ձեռն տուի արեցութեան և զիննմո-
լութեան, ի հարկ է յուսահատութիւնիցս էր: Յերկեք զբա-
ղած էի գործովս, զիշերից մին ժամ կամ երկու ժամ ան-
ցած չանցած, ամենայն զիննմոլութեան պարագայքը պատ-
րաստ էին տանա թուութակ, դափ, թմբուկ, դավալ, շուի, եր-
գեցողք և այլն ըստ կարգին:

Մինչ այս մինչ այն, Աղայ Մամադ խանէն յանդիմանու-
թեան գրէրը Սարգարի վերայ շատացաւ, որպէս թէ սա լա-
չէ կառավարում իւր պաշտօնը: Սարգարը լաւ գիտէր, ինչով
կարող է արդարանալ Շահի առաջին, ի հարկ է զբամ կամ
զօրքն էր պակասում նրան որ էնպէս գրեր էր գրում: Քա-
նի մի շաբաթ էր, որ Ներքինւոյն Շահ ասելն սկսել էին, ըստ
որում բոլոր Պարսկաստանը նրան համարեալ թէ հնազան-
դած էին, թէպէտ կային քանի մի փոքր տեղւոնք, որք յա-
մառուած էին, նոցա վերայ էլ շատ զօրքեր էր ուղարկուած:
Սարգարը հրամայեց ինձ յիսուն հազար թուման պատրաստի
գրամ և քսան հազար էլ ընծայի համար բանէր պատրաստեմ
ուղարկէ Շահին: Շատ երևելիք մեծ կաշառքներ և պար-
զենէր էին տալիս Սարգարին, որպէս զի իւրեանք տանեն և
ներկայացնեն էս ընծայները Շահին, բայց Սարգարի նպատակն
էր ինձ առաքել որպէս իւրեան մօտիկ ստորագրեալ: Արդարև
էս շատ յաջող ծառայութիւն էր թագաւորին, որովհետև
նոր բազմած աթոռի վերայ, մեծ էլ հարկաւորութիւն ու-
նէր փողի, և ով որ տանէր ներկայացնէր, մեծ պատուի և
փառքի տէր կլինէր, մանաւանդ թագաւորիցը ճանաչուած մին
անձը: Կային ծանօթներ, որք ինձ ստիպում էին խնդրեմ Սար-
գարին, ինձ յանձնուի էս ծանայութիւնը: Բայց հանդարտ
կեանքիս և ունեցած ձեռքումս պաշտօնիս նայելով, սրտով չէի
ցտնկանում ամենեկին: Նըջակայ քաղաքապետք լսելով էսքան
մեծ գումար գրամի ուղարկելը, իւրաքանչիւրն, իւրանց կա-

ապարութեանն յանձնված ժողովրդեանը համեմատու առաջարկեցին Սարգարին հեծելազօր էլ և հեռակ (ԹՖանդչի) ժողովել ուղարկել Շահին ինչան հնազանդութեան : Հաշուելով մերձ չորս հազար հոգի էին գումարվում : Երբ 4000 զօրականաց հրամանատարութեան ձէնը ականջներս լսան, և ազգականներս և ծանօթներս էլ ինձ յորդորեցին և զրգուցին ընդունելը, մեծամտութիւնս և փառասիրութիւնս էլ նոցա ընկերացան շուտով, այլայլեցայ և շատ փափագանօք ընդունեցի : Ի հարկ է էսպիսի մին հրամանատարութիւն, և էնքան գումարի տանելը, մին մեծ պաշտօն էր էն ժամանակը, որ բաղդաւորութիւնն առանց միջնորդի և բարեխօսութեան ուրուք ինձ էր վիճակվում, էն ժամանակուան կարծիքովը շատ անմիտ կլինէի, թէ չընդունէի :

Աչքիս առաջին էր, թէ հազիւ երեք ամսումը հասնենք Շահի մօտը և ճանապարհներին քանի՞ քանի՞ վայրենի ժողովրդոց միջովը պէտք է անց կենանք, որք չեն դեռ ևս կատարելապէս ընդունած Շահի հեղինակութիւնը. քանի՞ քանի՞ քաղաքներ ականայ և բռնութեամբ պէտք էր խոնարհացնէի ինձ, և ո՞րպէս պատերազմներ պէտք էր նրանցից յառաջ գային, յորոց որպէս քաղաքներ, նոյնպէս գիւղէր և ժողովուրդներ պէտք է յափշտակուէին և ասպատակուէին մեզանէ. քանի սրածութիւններ, վշտեր և նեղութիւններ պէտք է կրէր մարդկութիւնը մեզանէ, ճշմարիտն ասած. մեծամեծ գժուարութիւններ և խոչընդոտն էին, այսու ամենայնիւ փառասիրութիւնը և դիւրահաւան ցանկութիւնը յայլթող գտնուելով սրտիս, ամենաքաղցր էր երևում ինձ առ ժամանակեայ հրամանատարութեան յոյսը, վստահ որոյ և գուն գործեցի, որքան կարելին էր, շուտով ճանապարհ ընկնել :

Ամենայն ծանօթներս, մանաւանդ ազգականներս, և աւելի քան ղմիւսներն Ահմադ խանը, փող, ձի, ջորի, ուղտ, վըրան, սուր և այլ պատերազմի կամ ճանապարհորդութեան հարկաւոր գործիքներ ընծայ էին ուղարկում ինձ : Որպէս ասած եմ, Ահմադ խանը շուտով գիտէր իմ Հայ չախրելս, այսու ամենայնիւ շատ խրատներով յորդորեց ինձ և յետոյ խորհուրդ տուեց իւր դրանը մեծացած և շատ տարիներէ ի վեր փոր-

ձած երեք շայ երիտասարդներ տանեմ հետս, Յովսէփ անուն դանձապետ, Գաւթթը տեսուչ (նապիր) վրանէրնիս և կայիցս և Մովսէսն ախտապետ : Ես ոչ թէ չընդիմացայ աներոջս բարի խորհրդին, այլև ուրախութեամբ ընդունեցի :

Մինչև ցայսօր, ոչինչ կերպով չէին կարողացել Նադրից ևս յառաջ, օրինաւոր շահերի ժամանակը, զօրականաց ճանապարհներից փախչելոյ արդեւքը գտնեն : Շատ անգամ տանն հազարէն կէսը, և երբեմն քառորդը չէին հասնում Ասպահան : Զօրականաց էն կերպ փախուսան անպատիժ մնալով, սովորութիւն էր դառած : Էս ինձ և Սարգարի համար ևս մի մեծ դժուարութիւն էր երևում : Ահմադ խանը որպէս հինաւորաց փորձուած զօրական խորհուրդ տուաւ, նախ ամենայն ժողովօղապետից ձեռագիրներ առնել, և երկրորդ սրանց էլ հրամանադիր տալ, որպէս զի ամենայն փախչող զինուորի հօրն, եղբօրցն պատժին ու տնէրնին տեղէրնին յափըշտակեն, կրակեն, և իւրաքանչիւր փախչողի համար յիսուն թուման էն զիւղիցն, որոյ բնակիչն է, առնեն գանձարանի օգտի համար : Ի հարկ է էս ևս հաստատ միջոց չէր, այսու ամենայնիւ էն խառն և տարին մին անգամ իշխանութեանց փոփոխութեանց ժամանակի համար, մին յոյս էր զօրագլխին և երկիւղ փախչողին և նորա ազգականներին : Գարնան կէսն էր մեծ պատրաստութեամբ ճանապարհ ընկանք, քան օրումը հասանք Ձեանգեան, ուր հաշիւ տեսանք, երկու հարիւր հօգի զօրականներէն փախած էին, որոց անուանքն գրեցի Արդարին, նշանակեալ գումարն ստանայ տիրապետողներէն, և նոցա իրաւունք տայ իւրեանց հպատակներին պատժել, որպէս վերն ասացի, որպէս զի էս փախչելոյ առաջն կապուի :

Երեք կամ չորս օրուան ճանապարհլաւ մտիս չէ, Ձեանգանէն անց էինք կացած, մին զիշեր կէս զիշեր անց էր. մեր յառաջապահ զօրաց մէջէն նախ մին քանի հրացանի թրախկ թրուխկի ձէն եկաւ, փոքր փոքր շատացաւ էս ձէնը և մօտեցաւ : Մինչ իմ գարթնիլը, հագնուիլը, պատրաստուիլը չորս կողմիցն ականթօթափել մեր բանակի վերայ հրացանների կրակը, և բանակի մէջի ազաղակն և շփոթումը կնպէս սաստկացաւ, որ էլ ժամանակ չունեցայ մութն ու անձրևային

գիշերումը զօրքն կարգի ձգել, և զօրականներն էլ ոչ իւրեանց զլիաւորացն էին հնազանդվում, և ոչ զլիաւորքն իմ խօսքն էին հասկանում : Երևում էր, որ թշնամեաց ուժն էնքան սաստիկ չէր, որքան երկիւղն և արհաւիրքն էին պատած մերայնոցն : Ես իմ սպասաւորներովը թողել վրանս և մտայ Օվշար և Քեանդեարլու ձիաւորացի մէջը, որոց յանձնուած էր գանձըն և ընծայքն : Մինչև լուսանալն չկարողացանք հասկանալ թշնամեաց ով լինելն և որքանու թիւնը : Առաւօտը երբ բացուեցաւ, տեսանք հազիւ բանակի կէսն գանձի չորս կողմը ժողովված կան անձրևի տակին, որ շատ յորդու թեամբ էր գալիս : Եւ շատ վրաններ յափշտակուած գատարկ կային : Չեմ ուզում երկարօրէն մեր վիճակը ստորագրել, ամենայն զօրական կարող է նկարագրել մեր վիշտն ինչ աստիճանի էր էն րոպէին, մանաւանդ իմն, որ ամօթու մեռած էի :

Բանակէն փոքր ինչ հեռացողները լուր բերեցին, թէ քանի մի սպանվող թշնամիներէն ընկած կան, և երևում է շորերէն, զրահներէն, որ մեր չորեք կողմը բնակուած Քակաւան ասած ժողովրդէն են :

Պիտի շարունակուի :



ՊՍՆԴՈՒԽՏ ՀԱՅԿԱԶՆ

ԱՅՐԻ ՄՕՐՄԸ ՕՐՕՐՈՑ

Առ Հայս:

Ո՛վ դու իմ որդեանկ, իմ քաղցր որդեանկ,
Թշուառ մօրդ սրտին դո՛ւ միակ հրճուանք,
Ննջէ՛ իմ գառնո՛ւկ, ննջէ՛ աղանձեանկ,
Քեզ Օր, Օր, ասեմ, իմ սիրուն մանկեանկ,
Եթէ մի արցունք հանես աչքերէդ՝
Կամ «վայ, վայ» կանչես սաստիկ ցաւերէդ,
Աս քեզ հիմակուց կյայտնեմ՝ «մօրմէդ
Յայնժամ չյուսան (օր, օր), այլ աղէտ» :
Զի քեւ ես պիտի պարծիմ հայկազանց,
Քեւ զուարճանամ վշտեր մոռացած,
Երբոր վարդագոյն դիմացդ ժպիտ
Տեսնեմ, ու այնպէս խնդամ թիկնդ առ թիկնդ :
Ո՛ր, Օր, իմ գառնո՛ւկ անուշիկ գառնո՛ւկ,
Օ՛ր, Օր, իմ որդին դո՛ւ ես յոյս վերջին :
Բայց ո՛հ, պանդխտիս սիրտ լըցուած ցաւօք,
Ահունք խաւարել սգւոյ արտասուօք,
Իսկ քու աչերուդ վառ վառ ցոլացում
Կոյս տայ, մինչ համբոյր մատչեմ բըբերուն :
Մատչեմ բըբերուդ, և ընդ կոյս ոգւոյդ,
Ճախրելով՝ այ օր, ասեմ, և Օր, Օր :
Ո՛հ, այս մայրենի համբոյր զօր ես տամ
Որդեանկ իմ, արդեօք վշտեր մոռանան,
Կմոռանան ցաւեր՝ որ օտար յափունս
Զինչ նաւ հողմավար՝ ալէկոծ ի ջուրս,
Հողմունք տարադէմ, ղիս ի ժայռ մոլէն,
Տղուս օրօրոց, ձեռքէս կիլեն :

Եւ զուք ո՞վ մայրեր, որդեսէր մայրեր,
Ինձ պէս կգրա՞ք ձեր քիրոն ու ցուեր.
Թէ միայն խեղճ՝ մօրս ճակատողիրն էր
Անհայր մէկ որդւոյ՛ այսպէս ի յերբեր.

Դու քնիր մանկի՛կ, զրկասուն ծաղիկ,

Չես զու վատաբաղղ, մայրդ ապերձանիկ :

Ո՛հ, ձեզ երանի՛, որ չետէք խապա.
Թէ սրբան գառն է այրի մօր համար.
Տեսնել սակղօծ փայլուն որսրան՝
Օտար երկնի տակ իւր բազդէն կործան.

Այ օր, չէք օր օր, հանդի՛ր գող քոյդ մօր.

Եւ այրած սրաին, լսէ զու օր, օր :

«Այո՛, չէք օր, օր, չէք և խանձարուր,
Որդեանկ իմ արի՛, հանդի՛ր գիրկս մօր.
Այ օր, օր, օր, օր, յիմ ծոցիկ մաքուր.
Սյրեցեալ մօր, քաղցր է քոյդ օր օր՝

Այ օր, օր, օր, օր, զու պճնանք քոյդ մօր.

Քե ես սիգապանծ, ի կանայս բոլոր.

«Քե ցնծայ քո մայր, ո՛հ, անշուքն մայր.
Քե բացուին Հոյոց, շղթայք ժանգահար.
Քե բացուին շղթայք, խնդան Արամեանք,
Խնդայ և երկին, ու տայ յաղթանակ.

Եւ Հոյոց մեծաց, կանգնին յիշատակք,

Անւոյ քաղաքին, ահեղ փլատակք» :

ՈՐԴԻՆ ԱՍԷ.

«Մայր իմ, ո՛հ մայրիկ, գթառատ մայրիկ,
Ո՛չ ևս անծաղիկ, մտանեմ ծոցիկ.
Մայր իմ, ո՛հ ի հեռ, գնամ յայն երկիր՝
Յօրմէ հայկազունք, եղեն տարադիր.

Գնամ այն յերկիր յորմէ աղեղանց

Արք՝ այժմ սփիւ, այ, թեթև ի թիւ.

«Այն յերկիր գնամ, ուր վառք Հայկական,
Երբև զերազ ինչ, ո՛հ, անցին, կորեան.

Ո՛հ, պիտ' ես երթամ, տեսնել որորան,
 Որ ինձ ի հասակ հասուց մանկութեան •
 Տեսնեմ որորան, որ անկաւ կործան,
 Եւ ինձ ի շղթայս, էարկ գերութեան :
 «Ո՛հ, գնամ առ Հօր, շիրիմ ու տխուր,
 Յամաքեալ յոսկերս, ցողեմ թօր ի թօր» :

ՄԱՅՐՆ ԱՍԷ •

«Դու գնաս մանկիկ, իմ սիրուն ձագիկ,
 Իսկ ես յայս էրէզ, մնամ միակիկ •
 Մնամ միակիկ, բայց թէ ե՞րբ պիտի,
 Դառնաս զու յիմ գիրկ, ո՞վ մօրս հրեշտակիկ •
 Մնամ միակիկ, բայց քաղցր քօ ձէնիկ՝
 Որդեակ իմ, արդեօ՞ք, պիտ' լէ՞ մայրիկ :
 «Պիտ' լէ՞ քոյ ձայն, որդի տրամուլթեան,
 Ու թնդայ սրտիկս, որդւոյդ յայցելման •
 Պիտ' հասնի՞ իմ ձայն, մինչդեռ զքեզ լամ
 Յունկն քոյ քնքուշ, ո՞վ մօրս անձկութեան •
 Դու գնաս իսկ ես, մնամ աստ որպէս,
 Ո՞րպէն հանդուրժեմ, զի անկարգ եմ ես :
 «Ո՛հ, անկարգ եմ ես՝ անօր, վշտատես,
 Ո՛չ զլնոյս ստուեր ունիմ, ո՛չ վայելս» :

ՈՐԴԻՆ ԱՍԷ •

«Թո՛ղ, մայրս, երթամ, բայց ես զքեզ ո՛հ,
 Երբէք չմոռնամ, մինչ ի կէտ մահուան,
 Ո՛չ երբէք սրտէս, կհանեմ ըզքեզ •
 Եւ ո՛չ ի շրթանց, առնեմ գահալէժ •
 Այլ ուր որ երթամ, ուր տեղ որ մնամ,
 Ամէն քայլերուս, «մայր» հեծեմ ու լամ :
 «Ամէն քայլս փօխ, հառաչեմ ու լամ,
 Ամէն մէկ քայլիս, «հայր» գոչեմ ու լամ :
 Իսկ երբ օրօրոցն, յանշուք կերպարան,
 Տեսնեմ, քեզ կրկին, «մայր» գոչեմ ու լամ •
 Այն դաշտ պիտ' երթամ, ուր որ հայկազունք
 Զինչ ցօղալից վարդ՝ ոստաքանց ընկան :

«Այն բլուրն երևում, ուր մեր աղեղանց,
Պողպատեայ կուրծքեր, ընդ հողով ծածկուան.
Դէպ՛ այն լեռն երթամ, ուր մեր պրլպուրիկն,
Երգէր ու կանչէր զօրաց յաղթութեան.

Կանչէր նա զօրաց՝ սիրտ տար ակարաց,

Աղեղ, նետ, քաջաց, պատերազմողաց :

«Երթամ այն սարեր, այն ցուրտ սառն սարերն,
Ուր ինն քաջէր, զինչ գարնան վարդեր
Զմայլեցուցիչ, լցին բուրումներ :

Դէպ՛ այն սարն երթամ, ուր նետ հայկական

Դիցամուլ ազդաց, փշոց անկենդան :

«Ես երթամ այն անդ, այն լեռան ահեղ՝

Որոյ ի գագաթն, և Հայկին աղեղ:

Եւ իմ այս որդւոյս, ախուր հառաչանք.

Զգեմ սրտերուն, Հայոց արձագանք» :

ՄԱՅՐՆ ԱՍԷ.

«Ես իմ այս յետին, համբոյր վշտազին,

Տար ընդ քեզ յոր վայր, երթաս՝ ու թէ յերկին.

Աւանդ, իմ բաղդին, դիւրաշարժ բաղդին,

Որ ըզքեզ գրկեց, ձգեց ի դետին :

Ո՛հ, ցաւ իմ ուժգին, բաղդի մրրկին,

Որ հասաւ լսեց, գքեզ իմ ծոցէն :

«Ինչպէս որ թաթառ, զծառն յիւր արտէն՝

և վարդն ի թփէն.

Ե՛րթ ընդ քեզ լեցի, իմ սէր մայրենի,

Ե՛կ և մի համբոյր, ևս տամ սխրալի.

Ո՛վ, ի՛նչպէս քաղցր է, աղան մօր սրտի,

Ե՛րթ ընդ քեզ լեցի, որ էնն ամենին :

«Մայրեր զգացին, «աւանդ» զոչեցին.

Թշուառ ամուսին», ու անդէն լացին :

Դուք կուլայք մայրեր, սիրալիր մայրեր,

Բայց ինչպէս թշուառ, չքտեսաք օրեր :

Ո՛հ, ձեր զաւակներ, ձեր փափուկ զրկեր,

Ուր սնան մեծցան զինչ սօսի ծառներ :

Ո՛հ, ձեր տղաքներ, հայրենի տուներ,
Ունին, բարձրաբերձ, և աշտարակներ.

Ո՛հ, ձեր մանկուհիներ, ունին այգիներ,

Ուր կաթով մեղրով կանյընեն օրեր :

Ո՛հ, ձեր նորածին, սանկեայ տղաք՝

Սանդու ունին, նաև հոգատարք :

Ո՛հ, ձեր լուսամբու, համեստ պատանիք,
ձևարանք ունին, և եկեղեցիք.

Բայց իմ խեղճ տղաս, փառքերէն զրկուած,

Ուք բորիկ, գլուխ, գետին խոնարհած :

Օրորոցն ու հայր, ընկեր սարէ սար,

Փնառէ ու կանչէ, աղէկէզ ի քնար :

Ուր եբբ կդառնայ հեծեծէ «Հայր, Հայր»

Եւ ընդ հօր շիրիմ գնայ աչք խաւար.

Եւ անդէն օրպէս թռչուն նետահար

Գառնայ ու կանչէ «մայր իմ, ո՛ւր է հայր».

Ողորմուկ ձայնին կղիմանայ մայր.

Ո՛հ, չի գիմանար, մօր սիրտ վշտահար,

Մայր, որ մի մանկիկ, սենի յիւր ծոցիկ,

և այն՝ ցաւով լիք :

Ո՛հ, լաւ էր, զի իմ տղուք փակուէին
Այս թշուառ օրեր ալ չը տեսնէին.

Լաւ էր, որ արդ մօրդ այս տխուր խօսքեր

Լռէին, նաև աղէկէզ օղբեր :

Բայց զի քոյ գիմայ փախեան արդ ժպտք


Ո՛հ, ևս նորոգուին պխտի սրտիս վիշտք.

Ո՛հ, կրկին ցօղէ՞ն, լա՛ն աղի արտասուներս

Վարդան, չէ՛, հերիք այս վերջին համբոյրս :

Եղիշէ Մեծատունեանց .

Մխարցիսայ 1863 Յուլիսի 19. :



ՊԱՏԱՆԵԱԿ ՄԱՅՐ ԵՒ ՄԱՀ



Ո՞վ քաղցր ծոց դու մայրենի բոց որդեկացդ ապաստան,
 Ընդէր խուսեալ չամփոփես զես ի ծոց քաղցր մայրական,
 է՞ր մատնես դու մատաղ որդիդ ի սուր մանգաղ սեաւ մահուան,
 Կամի՞ս դու մայր զի ես Խսուր քողբ լՅցեմ ի դամբան.
 Ո՞վ Ատորոպէ գշտոյ մահուան մի՛ առաքեր դու ինձ մահ,
 Մի՛ հատաներ զթեշն իմ կենաց և մի շեջցի վառեալ ջահ.
 Այլ ընդունայն է ընդունայն և նա իսկ է խլայեալ,
 Յգէ նա ինձ զմահն անգուժ, զաղերս իմ նա չէ լուեալ.
 Հապա դու մայր, չտեսանես զի գամ թագչել ի գիրկ քո,
 Անագորոյն մահն այն Խսուր հալածէ զես աւանգ ո՞հ,
 Չկամիս դու ո՞վ մայր իմ մայր, գրկել զորդիդ պատանեակ,
 Զի գամ առ քեզ ծածկել 'դ անթովքդ բայն ինձ բաղուկդ քաղ-
 ցրունակ :

Ա՛հ երևի ի մէջ օդոյն մահն է մայր իմ ինձ է հուպ,
 Գեւք իւր դժգոյն աչք իւր խոժոռ սպառնայ ինձ խաւար դուր,
 Դողամ սոսկամ երկիւղք պատեն զանդամ ողջոյն ուժաթափ.
 Խաւար ծածկէ մթազին աչքս երթամ զերթ կոյր առ խարխոփ
 Կթոանին ծունկս սարսին սրունքս հուր ընթանայ յանդամս իմ,
 Սիան իմ դողայ խորշն աղիքս և առ ցաւոցս կողկողիմ.
 Ահա նիդակ իւր յաջ ձեռին 'ւ ի մի սու մն սուր և շանթ,
 Աղեղն ի յուս հսկայածև շնչէ նա ծուխ բոցացայտ.
 Ի թ ինչս ոտին դողայ գետին ժայռք և քարայրք տապալին
 Դայ զես խոցել ընդ մէջ կորել իւր սուսերաւն հրային,
 Դարձեալ գոչմ ծոց մայրենի պահեա զորդ իդ գէթ յայտ վայր.
 Մի թողուր զես շանթ ից մահուան խամբել մարմինս վայրապար


Ո՛հ սիրելիդ էր խուսիս դու մահուան ժանեաց արկեալ կուր.
 Զորդիդ միակ զորոյ սիրովն դու վառէիր իբր զհօր.
 Ո՞վ մահ հզօր քեզ ոգոքեմ ողորմէ գէթ մատաղ տիս.
 Մի՛ հարկաներ զիս տարածամ զեռ մանուկ եմ զթա՛ յիս :
 Իբր մի ծաղիկ դեռ արողքոջ որ կարի սուր գերանդէ.
 Նոյնպէս և ես դեռ ահասակ հնձի մարդ քոյ ձեռանէ.
 Դարձեալ գոչեմ աղերս առնեմ, ո՞վ հզօր մահ ողորմեան
 Մի՛ խամրեր զիս այսպէս արագ գէթ մի յայս վայր դու զթա՛.
 Բայց նշմարեմ զի չկամիս թողուլ զիս աստ կենդանի.
 Կեալ և ապրել ինձ ի յաշխարհ չհամարիս արժանի,
 Ուստի ո՞վ մայր զե՛ բացածիկ չոգար յինէն չհայիս.
 Զի ես դժբաղդ աստ մեռանիմ դալ տեսանել չկամիս,
 Ուստի բաց է սիրան իմ տկար առաջի քոյ անդու՛թ մահ,
 Այլ ինչ, մի՛թէ մեռանիմ ես երթամ ի հո՞ղ ափսոս անհ.
 Հայտա արի՛ ժանտածուտ մահ հար քոյ սրով զսիրտ իմ.
 Այսուհետև ինձ կեալ յաշխարհ ընդունայն է յոյս չունիմ,
 Կո՞ց դու ողջմամբ ո՞վ մայր քաղցրիկ ճակատագիրն այսպէս է :
 Ծոց մայրենի ընդունայն է, այլ կամք Տեառն օրհնեալ է :

Առաքել Նալպանդեան
 Խարատուցի.



ՈՂԶՈՅՆ ԾՆՈՂԱՑ

ՅԱՒՈՒՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՁԱՏԿԻՆ



Ո՛վ սիրելի դու մեր ծնող
Քնքուշ մայրիկ՝ մեզ սնուցող
Հանդիսաւոր գառկի օրը
Աղերսում ենք Փրկչի Հօրը :


Լսիր որդոցդ աղաչանքին
Ո՛վ Հայր Աստուած դու երկնային
Եւ օրհնիր քո այս գառներին
Ինչպէս արիր մանուկներին :

Նոցա կեանքը լուսաւորի՛ր
Նոցա օրերը երկարի՛ր
Թող լաւ բաղդով զուարճանան
Եւ տեսնեն սէր օրդիական :

Երբ տեսնում ենք մեք կարմիր ձուն
Միշտ յիշում ենք կարմիր արիւն
Որ բղինելով Փրկչի կողքից
Մեզ աղատեց սատանայից :

Յօրինեալ ի Նաթալիայէ Միրզոյեանց :

Ի Նուշի. 1863 Մարտի 31-ին :



ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ԵՐԱԶԱՅՈՅՍ ՄԷԿ ԿԱՐՄԵԱՅԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

(Մասնաց Աղանիկց քաղած) .

ԱՇԱԿԵՐՏՆ . Հայր սուրբ, անցեալ 1862 տարւոյն Բաղմա-
վկային առաջին յօդուածը նոր կարդայի, քանի մը խօսքերը
լաւ չհասկցայ. եթէ բարեհաճիք անոնց մեկնութիւնը տալ
մեծ շնորհք կրնէք ինձի :

ՎԱՐԴԱՊԵՏՆ . Կերևի թէ շ. Ղևոնդ Ալեշանեան վարդա-
պետին յօդուածոյն վրայ է խօսքդ :

Ա. Ս. յ. և որովհետեւ այժմու Բաղմավկային մէջ ազգա-
յին յօդուածները այն վարդապետին գրածներն են, սիրով կը
կարդամ. թէպէտ և շատ անգամ չեմ կրնար պարզ հասկանալ

Վ . Իրաւունք ունիս թէ սիրով կարդալու այն յօդուած-
ները, և թէ գանգատ ընելու որ զիւրաւ չես հասկնար ա-
նոնց ամէն խօսքերն ու իմաստները :

Ա. Չհասկնալուս պատճառն ինչ է արդեօք :

Վ . Շ. Ղևոնդին գրուածոց ընդհանուր ոճն է :—Տարա-
կոյս չկայ որ այն անձը ազգային հին պատմութեան և յի-
շատակարաններու, ևս և Հայաստանի հին աշխարհագրութեա-
նը լաւ հմտութիւն ունի. և կարելի է նորա գրուածքներէն
օգտակար անդեկութիւններ առնուլ այս բաներուս կողմանէ .
ուստի և բնական է որ ազգային հնութեանց սէր ունեցողը
սիրով կարդայ այն գրուածքները : Բաց յայնմանէ շատ տեղ
բանասանդական «իսկատիպ»* բացատրութիւններ ունի որ

* Իրեն հնարած թարգմանութիւնն է այս «իսկատիպ» բառը Երոսպական
original բառին, և գէշ չէ, բայց կարելի է ըստ տեղոյն թարգմանել
նաև «այլանդալ», աննթիթ, նորանշան, ծիծաղաշարժ, և այլն .

կարդացողին աչքին անպատճառ կդարնեն. երբեմն կզուարճացնեն զիրքը և երբեմն ծիծաղը կշարժեն՝ իրենց աղայական՝ չքսեմ իմաստակական մտածմունքներովը : Իսկ անոր թէ արձակ և թէ ոտանաւոր՝ գրուածքներուն մթութեանը և խրթնութեանը զլիսաւոր պատճառն այն կերևի՝ որ նախ շատ մտածութիւնները խառնաշփոթ են, թո՛հ և բո՛հ, աներևոյթ և անպարաստ. երկրորդ՝ անոր հետեանք՝ գրուածքին ոճն ևս, թէ զրաբաւին և թէ աշխարհաբաւին, խորաւորորդ, նորահնար, խրթին մթին և դժուարիմաց, այնպէս որ նորա շարագրութիւնները կարդացող՝ կուզնոտ քարոտ կերակուր ուտողի պէս անդադար մտքէն դուրս պիտի ձգէ նորահնար բարգուծութիւններն ու դժուարիմաց բառերը՝ եթէ չուզեր ակռաները կտորտել : — Բայց այդ առ այժմ չմողումք, որո՞նք են տեսնեմ այն յօդուածին խօսքերն որ չես կրցած հասկնալ :

Ա. շ. Մէկը այս խօսքն է որ ահա օրինակեր եմ. «նոյն ատեն Ղատին վարդապետք և նոր միանձուռք դարձեալ սկսին յաճախել ի Հայս, Հայք կրնան ընդհանրական եկեղեցոյ սէրտ միաբան ըլլալով ի հաւատս պահել իրենց ազգային լեզուն, ծէսն և օրէնքներն» : Այս բանս աւելի հաստատ և պայծառ կուհռչակէ Ք. Ղ. դարուն սկիզբը Սեբաստացի քաջուհաւատ վարդապետ մը. Մխիթար, միաբանակեցաց ընկերութեամբը, զոր հաստատէ ազգին 500 տարուընէ վեր ծանօթ դաշնակից և վաճառակից Անեեակոյ սահմանաց մէջ. Ճշմարտութիւն կրօնական, կրթութիւն բանական կամ ուսմունք, և ողի ազգային, այս ընկերութեան նպատակն կու ճանաչուին պատուին պողարերն» : Արդեօք ի՞նչ ըսել կուզէ այս խօսքով թէ «Հայք կրնան ընդհանրական եկեղեցոյ սէրտ միաբան ըլլալով ի հաւատս, պահել իրենց ազգային լեզուն, ծէսն և օրէնքներն» :

Վ. Այդ բանը ոչ միայն Հ. Ղևոնդին, այլև ընդհանրապէս ամէն Մխիթարեանց մէկ «երազն» է, զոր շատ անգամ տեսեր են, և քանի մը անգամ արթննալէն ետքն ալ դեռ կը տեսնեն ու կը զուարճանան, թէպէտ և իրենք ևս զոնէ ամէնքը, չեն հաւատար. այսինքն իբր թէ «կարելի բան է, որ Հայերը հռովմէական կամ Աթոյլիկ և պապական դառնալով

ևս իրենց ազգութիւնը անկորուստ և անթերի պահպանեն»։
 Կամ որ նոյն է, «կարելի բան է որ Հայերը իրենց ազգային լե-
 զուն, ազգային ծէսը և ազգային օրէնքները անկորուստ և
 անթերի պահելով ևս Վաթոյիկ լինին» : Ասոր մէք «երագ» կը-
 սեմք և «երազայոյս կարծիք», վասն զի մէք ալ տեսեր եմք
 ատենով : և արթընցածնուս սէս հասկըցեր եմք թէ «և ահա
 երագ էր» : և իրօք անկարելի բան է ու եղջերուաքաղ : Ան-
 կարելի բան է կըսեմք՝ կաթոլիկութեան հետ սերտ միաբան
 լինել ի հաւատոյս, և միանդամայն հայկական ազգութիւնը,
 մանաւանդ ազգային եկեղեցական ծէսերն ու արարողութիւն-
 ները անկորուստ և անխառն պահպանել :

Ա. Բայց, Հայր սուրբ «կաթոլիկութիւնը» հաւատք կամ
 դաւանութիւն լինելով ըստ ինքեան պէտք է որ հակառակ
 լինէր ազգութեան և ազգային ոգւոյ :

Վ. Եթէ «կաթոլիկութիւն» ըսելով չհասկըցուէր «պա-
 տականութիւն», այլ պարզապէս ըստ բուն և նախնական նը-
 շանսութեան այդ յունական բառին՝ հաւատք կամ դաւա-
 նութիւն ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի, ի հարկէ ին-
 չու հակառակ պիտի լինէր ազգութեան և ազգային ոգւոյ :
 Գու ալ դիտես, որ Քրիստոսի սուրբ եկեղեցին անոր համար
 ալ «կաթոլիկէ», այսինքն «ընդհանրական» ըսուած է որ ա-
 մէն ազգէ մարդիկ կրնան մէջը գանուիլ՝ առանց իրենց ազ-
 գութիւնը կորսընելու : Բայց որովհետեւ այժմ սովորութիւն
 եղած է «կաթոլիկութիւն» խօսքով հասկընալ պատպականու-
 թիւն, հռովմէականութիւն, Վատինացւոց եկեղեցւոյ գլխոյն
 այսինքն պատպին՝ կուրօրէն հպատակութիւն, — ինչպէս որ կը
 հասկընայ նաև Հ. Ղևոնդը, և ընդ նմա իւր Մխիթարեան
 ընկերակիցներուն միաբանութիւնը, — անոր համար այս տե-
 սակ կաթոլիկութիւնը բոլորովին խախտիչ է ազգային ոգ-
 ւոյ, և մանաւանդ որ և իցէ արևելեան ազգութեան : Բւտի
 և այդպիսի մեղմէխ խօսքերը ուրիշ բան չեն՝ բայց եթէ մէկ
 մէկ խայծ (եէմ) զոր ատենով Վատին կրօնաւորք, և այժմ
 Մխիթարեանք, իրենց կարթին (օլթային) ծայրը կանցընեն,
 որպէս զի մեր պարզամիտ ժողովուրդները բռնեն բռնեն ու
 պապին ուռկանը ձգեն :

Աշ. Կաթողիկոս թիւնը արդեօք աւելի ի՞նչ պատճառաւ կամ ի՞նչ կողմանէ հակառակ կենէ ազգային ոգւոյ և ազգութեան :

Վ. Հռովմայ պապերուն «երկիշխան պէտուութեանը» պատճառաւ, —ինչպէս որ նա ինքն Հ. Ղևոնդը այդ նորահնար «խկատիպ» բառով կանուանէ պապական իշխանութիւնը դոյն հատուածին մէջ : Վասն զի ի՞նչ է պապերուն միմիայն քանքը, եթէ ոչ այս, որ հոգևոր և մարմնաւոր իշխանութեամբ բոլոր աշխարհի տիրապետեն, ամէն մէկ ազգի ճակատը պապական կնիքը կոխեն, և ամէն տեսակ ազգութիւն աշխարհիս երեսէն վերցընելով՝ կաթողիկոս թիւնը կամ պապականութիւնը ազգութեան տեղ անցընեն : Ինչպէս որ շատ աղէկ յայտնի է ամէնուն, ևս և Մխիթարեանց :

Աշ. Եւ միթէ դաւանանքով մէկ և ազգութեամբ տարբեր լինելն ըստ ինքեան անկարելի՞ բան է :

Վ. Ըստ ինքեան անկարելի չէ, և անով է որ արևելեան եկեղեցեաց մէջ զանունող քրիստոնեաները դարերով մնացեր են նոյն դաւանանքի մէջ՝ առանց իրենց ազգութիւնը կորսնակուլ. բայց բազմադարեան փորձը կցուցընէ որ այդ բանը եթէ ուրիշ ազգաց համար դժուարին է, յատկապէս մեր Հայոց ազգին համար անկարելի եղեր է մինչև ցայժմ : և այսուհետև ալ անկարելի պիտի լինի՝ քանի որ Հռովմայ եկեղեցին իրեն տիրապետական հողին մէկդի չընէր : Ինչէն է որ մինչև ցայժմ մեր ազգէն պապական դարձողները «Հայ» ըսուելէն կը խորշին ու կամըջնան, և երբ հարցուին թէ ի՞նչ ազգէ ես «կաթողիկ» եմ կրօնն : Հազար թող հասկըցընէ անոր Մխիթարեանը կամ ո՞վ որ և իցէ թէ այլ է «հայութիւնը» և այլ է «կաթողիկոսութիւնը», և թէ պէտք է որ կարենայ մէկը «Հայ» լինել առանց «կաթողիկ» լինելու, ինչպէս նաև «կաթողիկ» լինել առանց «Հայ» լինելու. — որո՞ւ կրօնն :

Պիտի շարունակուի :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻ

Ա Մ Ս Ա Գ Ր Ո Յ Ն

1864—Թուականին համար .



Հայոց Աշխարհի Կռունկը իր տարեկան շրջանը վերջացնելու վրայ ընելով, պատիւ ունի ծանուցանելու իր բարեսէր բաժանորդներուն և ազգայիններուն, որ յաջորդ 1864 թուականումն էլ հայրենեաց մտաւորական երկնքումը թռչելու մտադիր է նոյն և մի ընթացքով, ինչպէս յառաջ, բայց հարկաւ աւելի ջանք և փոյթ անելով, որ իր զկզբունքներն, զբայանքներն ու բարբառը աւելի ընդարձակ, աւելի հասարակաց և աւելի ժողովրդային անէ. Արդ կինդրէ իր բանասէր բաժանորդներից, որ իրանց բաժանորդութիւնը շուտով նորոգեն յաջորդ տարւոյն համար և կհրաւիրէ նմանապէս իր սիրելի ազգայիններն էլ բաժանորդ ընելու :

“Հայոց Աշխարհի Կռունկը, ինչպէս անցկացած տարիներումն իր շրջանն անելիս ազգային մտաւոր երկնքին մէջ բաւականին ընդունելութիւն էր գտել իր ազգայիններից, նմանապէս մի և նոյնը և այս

տարուան արած շրջանումը գտաւ , շատ քաղաքներու ազգայինք թէ գրով և թէ բանով խնաց արին իրանց գոհունակութիւնն ու բաւականութիւնը , Արարնկան մասին . բայց այն էլ պէտք է ասենք , որ Արարնկան այս տեսած ընդունելութիւնն իրան այնքան նիւթական գորութիւն չմատակարարեց , որչափ որ յուսացուում էր և նրա համար ոչ սակաւ նեղութիւններ կրելու պարտաւորեցաւ . բայց յոյս մեծ է , որ յաջորդ տարւոյն հունձը մեծ ընելով իրան սնանելու և ծնանելու համար բաւական ընի և այս տարուան քաշած նեղութիւնները թեթեւացնէ :

Առունկը մեծապէս շնորհակալ ընելով անցկացած տարուայ այլևայլ քաղաքներումն ունեցած բարերար մատակարարներիցը , մասնաւորապէս կինդրէ նրանցից , որ այս ներկայ տարւոյս էլ բաժանորդներ մատակարարելու հոգս տանելու յանձնառու ըլին , որոնց ձեռնհասութեամբ միայն կարող է թռչիլ :

Առունկն իր ընթացքը հայրենի երկրի տակից դուրս չտանել . նոյն ազգային հոգւով պիտի ապրի միշտ . իր հրատարակելի նիւթերը պիտի լինին յաջորդ տարին , էլի ազգային նորանոր հեղինակութիւններ , լոյս չտեսած ազգային յիշատակարաններ , ազբիւրներ , հատուկոտոր գրուածքներ , պատմութիւններ , վիպասանութիւններ և բայցի սրանցից ազգային կեանքի և բարքի զարգացման համար ժողովրդային փլիխտօնայական և բարոյական գրուածքներ և այլն և այլն :

Միմիայն այն է ինդրում Առունկը իր բաժանորդներից և բաժանորդ ընելու ցանկացող ազգայիններից , որ մի ժամ յառաջ իմաց անեն խմբագրին իրանց կամքը և շուտով իրանց ստորագրութիւնն էլ դրկեն , որպէս զի ինքն էլ ժամանակին ամէն բան

պատրաստի և այսուհետև ամէն ամսոյ սկզբին դուրս գայ իր ձուից և ժամանակին գնայ թուշի եր տեղը :

Առնկան բաժանորդութեան գինը կըլնի ինչպէս որ միշտ էր , թէև մտադիր էինք պահասացնել , բայց թող յայտնի ընի հիմակուց մեր ազգայնոց , որ երբէք չէ կարելի Առնկան գինը պահասացնել , քանի որ բաժանորդների թիւն հազիւ նրա գործքը դուրս հանելու բաւականում է , ներկոյ տարուոյս վերջին թուերումը կտեսնեն մեր ազգայինք Առնկան բաժանորդների թուին և անուանց ցուցակը :

Տփխտումը Առնկան բաժանորդ ընել ցանկացողները կարող են Յարգոյ պարոն Համբարձում Էնֆիտանցի և Յարգոյ պարոն Տէր Միքայէլէ-կանցի և ընկերութեան վաճառանոցներումը յայտնել իրանց ցանկութիւնը և ոտորագրուիլ , իսկ գրտի քաղաքներից , պէտք են իրանց նամակներն ուղղակի խմբագրին ուղղեն այս հասցեով , Պ. Մարկոս Ազոբէգէան խմբագիր Առնկան—ի տուն Բաբա Վարժէքուլեանցի ի Տփխա :

Խմբագիր

Մարկոս Ազոբէգէան .

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ԾՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵՒ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԱՅՅՄԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

(Գաղղիականէն թարգմանուած)

Տփլիս Գաբրիէլի Մելքումեանց և Համբարձումայ
ԷնՖիաճեանցի տպարանումը տպած :

Գինն է 80 կոպէք արծաթ.

Կծախուի Տէր Մեքայէլեանցի և ընկերութեան
գրավաճառանոցն ու Կռունկ Հայոց Աշխարհի ամ-
սագր յն խմբագրին մօտ ի Տփլիս , իսկ ուրիշ քա-
ղաքներից ուղղները կարող են Կռնկան խմբագրին
ուղղել իրանց կամքը :

Նախընթաց ամսոյն Կռնկան 627 Էրեսումը և Եօթներորդ տողումը սխալմամբ
Աղայ Մկրտչի է գրուել, փոխանակ Աղայ Աւետիքի գրուելու :

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀՈՄԲԱՐՉՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Сентября, 1863 г.